№ 19 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 27

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 27 № 19

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Յունվարի 1-ից մինչև 1 յուլիսի 4 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱԳԱՌԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Արտիստների, օրկէստրային, երգեցիկ խմբի և բալէտի օպերային միացեալ ընկերութիւնը յայտարարում է, որ այսօր, յունվարի 27-ին, ցերեկվայ ժամի 1-ին Ալէքսանդրո-Նէվսկի տաճարում կայանալու է ռուսաց օպերայի երգչուհի՝

Ն. Ա. ԳԱԳԱՅԵԱՆԻ

հոգեհանգիստը։

Տիկին Նունէ Ց. Ալիբեգեանը յայտնում է իր ազգականներին և ծանօթներին, որ շաբաթ օրը, ամսիս 28-ին, իր ամուսնու՝

ՊԵՏՐՈՍ Ց. ԱԼԻԲԵԳԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը Մուղնու ս. Գէորգ եկեղեցում հոգեհանգստեան պաշտօն կը մատուցվի։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

Չը նայելով որ յունվարի 20-ին լրացաւ ժամանակաւոր գեներալ-նահանգապետի տուած ժամանակամիջոցը, ոչ բոլոր տանտէրերը հոգ տարան դռնապաններ վարձելու. այդ պատճառով քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում նախազգուշացնել, որ այն տանտէրերը, կապալառուները և տների կառավարիչները, որոնք այս յայտարարութիւնը հրատարակելուց 3 օրվայ ընթացքում դռնապան չեն վարձի, ԿԵՆԹԱՐԿՎԵՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաշտութեան գրաւականը. Պարսկաստանի ճգնաժամը. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Համառուսական մահմեդական համաժողովը և պ. Իբրահիմովը «Ուլֆեթ» լրագիրը. Մամուլ. Գործադործութիւնը Նոր-Բայազէտի գաւառում. Դումայի գործերից. Դարձեալ կենտրոնացման և ֆեդերացիայի խնդիրը. Նամակ Կարսից. Նամակ Նիկոլսկ-Ուսուրեյսկից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Բուլղարահայ գաղութը. Կոմս Բիւլօվը սօցիալիզմի դէմ. Նամակ Ամերիկայից. Բեռլինի ճառը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԳՐԱՒԱԿԱՆ

«Շարժումներ» վերնագրով մի շարք յօդուածներում մենք աշխատեցինք քննութեան առնել այն առարկութիւնները, որ հանդէս են բերում Թուրքերը բացատրելու և արդարացնելու իրանց բռնած դիրքը դէպի հայերը։

Այդ առարկութիւնները բաւականաչափ համոզեցուցիչ չէին և այն տպաւորութիւնն էին թողնում, որ նրանք իսկականները չեն, այլ վարագուրում են մի ուրիշ, աւելի էական շարժառիթ։

Իսկ եթէ այդ աւելի էական շարժառիթը չը կայ, այն ժամանակ մնում է սարսափով գալ այն եզրակացութեան, որ Թուրք մասսան մի չափազանց անվստահելի տարր է, որին կարելի է շշմեցնել ամեն տեսակ առասպելներով, խաղացնել նրան ամենաանարժան կերպով և նրան հրել դէպի ամենավայրենի գործողութիւններ, գրգռելով նրա ագահութիւնը դէպի ուրիշի գոյքը և բորբոքելով դաւանական կրքեր դէպի օտարացեղերի և օտարակրօնների կեանքը։

Ծանր և սոսկալի եզրակացութիւն։

Բայց այստեղ մի հարց է առաջ գալիս։ Լաւ, դիցուք, Թուրքական մասսան բռնվել է մի հանրային շարժումով, վարակվել է մի հոգեկան ախտով, մի «պսիխօզով»։ Սակայն նա այդ դրութեան մէջ է ընկել որոշ անձերի, որոշ գործողների յուզիչ ազդեցութեան տակ։

Այդ մէկ։

Իսկ միւս կողմից, եթէ Թուրքական ազդեցիկ դասակարգը համաձայն չէր մասսայի այդ շարժումներին և նրա բարբարոսական գործողութիւններին, նա պէտք է մի որ և է կերպով բողոքէր, մի որ և է եղանակով զատէր իրան այն չարամիտներից, որոնք նուիրել էին իրանց դաւադրական սուր գործին։

Այդ մենք չը տեսանք։

Մենք լսում էինք մեր Թուրք հարևաններից, որ նրանք գնահատում են մեր հայերի կուլտուրականութիւնը և մեր առաջադիմական ձգտումները, բայց իրականութեան մէջ մենք տեսնում էինք, որ Թուրք մասսան մի անխնայ կռիւ է սկսել մեր համայնքի և ստեղծած կուլտուրայի դէմ։ Առանց տատանվելու, առանց քաշվելու սուր էին անցկացվում ամեն հասակի մարդիկ, հրդեհի և աւերի էին ենթարկվում քաղաքի ամբողջ Թաղեր, բազմաթիւ գիւղեր և ամայութեան մատնվում արգաւանդ ու բարգաւաճ տարածութիւններ։

Ի՞նչ շահ կարող էր ունենալ Թուրքը կուլտուրան ոչնչացնելու մէջ—այդ անյայտ է մեզ համար։

Եւ արդեօք երբ և իցէ կը բացատրեն մեզ մեր հարևանները։

Եթէ նրանք անկեղծ են, եթէ մեր հայերի մէջ նրանք գնահատում են կուլտուրական և քաղաքակրթական տարրերը, այն ժամանակ նրանք պէտք է ամեն խնամքով փայփայէին մեր կուլտուրական կեանքի բողբոջները, լաւ հասկանալով, որ մեր կուլտուրան օրինակ է ծառայելու և իրանց մասսաների համար, որ նա մի բարեբար մակարդ, մի բարեշրջող խմոր է լինելու Թուրքական կեանքի բարեփոխութեան համար։

Դժբախտաբար, մենք տեսանք բոլորովին հակառակը։

Ստեղծված կուլտուրան կործանվում էր Թուրքական ամբոխների ձեռներով և ազդեցիկ անձերի ոչ միայն լուռ հաւանութեամբ, այլ և եռանդուն աջակցութեամբ։

Այն դէպքերում, երբ մենք փորձեր էինք անում հաշտութիւններ կայացնելու և ապագայ խաղաղութիւնը ապահովելու, մենք միայն խաբված էինք լինում։ Եւ բանը հասաւ այն տեղին, որ այնուհետև հայերը սկսեցին նայել Թուրքերի կողմից արված ամեն մի հաշտարար և խաղաղարար առաջարկի վրա, իբրև ազդանշանի նոր յարձակումների համար։

Եւ իւրաքանչիւր նոր դէպք գալիս էր հաստատելու այդ ենթադրութիւնը։

Հասկանալի է այժմ, թէ ինչու հայերը իրանց առաջին, շատ պատրաստակամ, հաւատախացումներից յետոյ, որ արին Բագւում, Երևանում և Նախիջևանում, այնուհետև ամեն մի նոր դէպքում ասում էին Թուրքերին՝ «մենք ձեզ վրա այլ ևս վստահութիւն չունենք և դուք պէտք է հաստատ ապացոյցներ տաք, որ Թողել էք ձեր չար դիտաւորութիւնները և անկեղծ կերպով վճռել էք հանգիստ մնալ և յարձակումներ չը գործել»։

Ինչպէս, օրինակ, հայերը հաւատային Ղազախի գաւառի Թուրքերի հաւաստիացումներին թէ նրանք միայն և միայն հաշտ ապրել են ցանկանում, երբ նրանք ամենայաժառ և ամենաանբերես կերպով ձգտում էին դուրս քշել իրանց գաւառից Արնօլդին, այն գաւառապետին, որ ամենաեռանդուն և ամենաարդար միջոցներով արգելք էր հանդիսանում հաշտութեան քայքայման։

Մի բան խօսքով, մի ուրիշ բան գործով—ահա ինչ համոզեց հայերին, որ մեր երկրում կատարվում է մի այնպիսի սոսկալի դաւադրութիւն, որը ոչ մի միջոցի մէջ խտրութիւն չէ դնում և որը ստեղծել է լաւ բառերը և խոստումները միայն վատ արարքի և խոստմնազանցութեան համար։

Մենք անհամբեր կերպով սպասում ենք, որ մեր հարևանները վերջապէս ոտք կոխեն իրանց բարի խոստումների կատարման շաւղի վրա և համոզեն մեզ, որ նրանք անկեղծ կերպով ցանկանում են խաղաղութիւն։

Իսկ եթէ նրանք կը սկսեն դարձեալ զանազան խաղեր, կը պահանջեն, որ մամուլը ոչինչ չը մերկացնէ մեր իրականութիւնից, յանցաւորները չը պատժվեն, որ Թալանները մնան աւազակների ձեռքում, որ Թուրքերը կարող լինեն և այսուհետև շարունակել ասպատակութիւնները—այն ժամանակ անկարելի կը լինի հաշտութիւն։

Մենք կարօտ ենք հաշտութեան, բայց անկեղծ և հաստատ հաշտութեան։

Երբ հաշտութիւնը միայն ժամանակ որսալու մի պատրուակ է, նա ոչ թէ հաշտութիւն չէ, այլ մի սարսափելի մեծ վտանգ է հաշտութեան համար։

Տուէք մեզ կատարեալ հաշտութեան գրաւական։

Մենք պատրաստ ենք հաշտվելու։

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Մենք նորից վերադառնում ենք Պարսկաստանի ճգնաժամին։

Մեր նախորդ յօդուածի մէջ այն միտքն յայտնեցինք, թէ րէֆօրմների և սահմանադրական կարգերի ներմուծումը Պարսկաստանում կարող է այժմ փոքր ի շատէ աջողութիւն ունենալ, քանի որ այս անգամ այն զօրեղ տարրը, որ մինչև այսօր ընդդիմանում էր որ և է եւրօպական բարենորոգութեան ներմուծման, այժմ ինքն է ասպարէզ իջել րէֆօրմների պահանջով։

Սակայն այդ չէ նշանակում, թէ րէֆօրմների, այն ևս եւրօպական րէֆօրմների իրագործումը մենք սպասում ենք պարսկական հոգևորականութիւնից, որ ինքն ըստ ինքեան, ներկայացնում է մի ռէակցիօնական տարր, որ թշնամի է եղել և կը լինի ամեն մի եւրօպական լուսաւորութեան, հանրամարդկային քաղաքակրթութեան։

Եթէ մահմեդական հոգևորականութիւնը Պարսկաստանում ծխախոտի րէժիմի խնդրի մէջ հանգուցեալ Նասրէդդին Շահին զօրեղ դիմադրութիւն չանէր և Թոյլ տար նրան վարչական, տնտեսական ու ֆինանսական րէֆօրմների հիմքը դնել, ինչպէս ծրագրված էր 1885—1889թ. Պարսկաստանը գուցէ այսօր բարգաւաճման և զարգացման հաստատ հողի վրա կանգնած լինէր։

Հէնց այդ հոգևորականութիւնն էր, սէյիդների և մոլլաների խառնած, կազմակերպված կաստան, որ զօրաւոր էր հանդիսանում նախորդ սադրազամին և հնարաւորութիւն էր տալիս նրան խեղդել ամեն մի վերանորոգչական ձգտումն։

Սակայն, այժմ, այս կամ այն շարժառիթներից դրդված, հոգևորականութիւնը միացել է այն պահանջին, որ վաղուց արվում էր ինտելլիգենտ պարսիկ սակաւաթիւ մի խմբի կողմից—վերջ տալ ինքնակալական, միահեծան, բռնապետական կառավարութեան ձևին և ժողովրդին ևս յանձին ներկայացուցիչների մասնակից անել երկրի կառավարութեան գործին։

Եւ Շահը, որ միշտ տրամադրութիւն է ցոյց տուել կարգ ու կանոն մտցնել իր երկրի մէջ, տեղի տալով այդ պահանջին, հաւանութիւն է տուել, որ մի տեսակ խորհրդարան կամ Պետական Դումա կազմվի, որին և տրվի օրէնսդրական ու նախաձեռնողական իրաւասութիւն։ Սակայն այդ խորհրդարանը անկարող է, որովհետև նա կազմված չէ իսկական ժողովրդական ներկայացուցիչներից, այլ բարձր հասարակութեան, այն է հոգևորականութեան, կալուածատէրերի և վաճառականութեան ներկայացուցիչներից։

Այնու ամենայնիւ որքան էլ նա անկատար լինի, բայց Շահի որոշումը, իբրև մի պետական ակտ, որոշ նշանակութիւն ունի, մասամբ նոյնը, ինչ որ ունի Ռուսաստանի համար հոկտեմբերի 17-ի ակտը։ Այդ ակտով Իրանի Շահնշահն ևս, Ռուսաստանի Ինքնակալի նման, հաստատում է, որ ինքնակալական, միահեծան րէժիմի գոյութիւնը այլ ևս անժամանակակից է և ժողովրդական ներկայացուցչութեան իրագործումը՝ անյետաձգելի։

Այդ տեսակէտից նա պատմական անգին նշանակութիւն ունի։

Եւ նրա իրագործումը կարող է հեշտանալ հէնց այն պատճառով, որ հոգևորականութիւնը չի դիմադրի այդ ակտին։ Բայց հոգևորականութեան դերը այդ չափով միայն նշանակութիւն ունի։ Կառավարութիւնը և երկրի այն պրօգրէսիստ, կուլտուրական ույժերը, որոնք ձգտում են րէֆօրմներ, սահմանադրական կարգ ու կանոն մտցնել, պէտք է մեծ ճարպկութեամբ, տակտով կարողանան օգտվել հոգևորականութեան այդ տրամադրութիւնից, որպէս զի նա նոր կեանքի, նոր կարգերի խոչընդոտ չը հանդիսանայ ապագայ վերանորոգչական գործունէութեան ընթացքում և այժմեան դասակարգային կամ կղերական-բուրժուազական խորհրդարանը դառնայ իսկական ժողովրդական խորհրդարան։

Թէ հոգևորականութիւնը հակառակ կը լինի բուն սահմանադրական կազմակերպութեան, բառիս եւրօպական մտքով, դրա մասին ոչ մի կասկած լինել չէ կարող։

Հոգևորականութիւնը պէտք է պահանջէ, որ Թանզիմաթը (սահմանադրութիւն) հիմնված լինի շարիաթի, ղուրանի օրէնսդրութեան վրա, իսկ շարիաթը և եւրօպական սահմանադրական կազմակերպութիւնը իրար հակառակ, իրար ջնջող հակասութիւններ են։ Եւ այդ է պատճառը, որ մենք մեր նախորդ յօդուածի մէջ ասացինք, թէ Պարսկաստանի ներկայ յեղափոխական շարժումը մասամբ ուղղված է և եւրօպացիների դէմ։ Հոգևորականութիւնը գլուխ է կանգնած այն կուսակցութեան, որը թէ և պահանջում է րէֆօրմներ, բայց այդ րէֆօրմների հետ միասին անհրաժեշտաբար պահանջում է և եւրօպացի պաշտօնեաների արտաքսումը, այն պաշտօնեաների, որոնց միջոցով Շահը սկսեց վերջին տարիներս մտցնել մաքսային, պօստային, ֆինանսական, տնտեսական րէֆօրմներ։ Այդ շարժման ընդդէմ եւրօպացիների կամ քրիստոնեաների՝ ույժ է տալիս և պանիսլամական կուսակցութիւնը, որ վերջերս ոչ նուազ զարգացումն է ստացել Պարսկաստանում։

Արդարութիւնը ստիպում է խոստովանել, որ եւրօպացիները—անգլիացի, ֆրանսիացի, ռուս, գերմանացի, ամերիկացի իրաւամբ գրգռել են պարսիկ ժողովրդի դժգոհութիւնը իրանց գործունէութեան մերկանտիլ, կեղեքիչ բնաւորութեամբ և միշտ վերաբերվել են պարսիկ ժողովրդին արհամարհաբար ու շատ քիչ ջանքեր են արել նպաստել պարսիկների կուլտուրական, կրթական, քաղաքական զարգացման։

Այժմ հարցը նրա մէջ է, ում ձեռքով պէտք է իրագործվեն րէֆօրմները, եթէ եւրօպացիների դէմ զօրեղ հոսանք է սկսվել։ Ունի Պարսկաստանը իր մէջ հարուստ, կարող, ձեռնհաս տեղական ույժեր՝ վերանորոգչական մեծ գործը առաջ տանելու համար Եապօնիայի նման։

Այդ հարցի մասին կը խօսենք։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ագստաֆա, յունվարի 26-ին

Զօրքերի հրամանատար Լէվիցկին 24 յունվարի երեկոյեան մուտք գործեց մեր գաւառ։ Նրա վրա յանձնարարութիւն է տրված խաղաղացնելու գաւառը և հաշտեցնելու հայերին Թուրքերի հետ։

Ղազախ, յունվարի 26-ին

Գաւառապետը ուղևորվեց դէպի գիւղերը առաջարկելու, որ հայերը և Թուրքերը հաշտվեն։ Հայերը պատրաստ են ընդունելու այդ առաջարկը, որովհետև նրանք նախայարձակ չեն լինում և միայն դիմադրում են յարձակումներին։

Ներկայումս երկու կռվող կողմերը ամուր կանգնած են իրանց դիրքերում։ Թուրքերի կորուստը մեծ է այն պատճառով, որ նրանք մեծ Թւով արշաւում են հայերի վրա և հարուածներ կրելով մեծ զոհեր են տալիս։

Գորիս, յունվարի 26-ին

Հայերը ուրախ են, եթէ գեներալ Գոլոշչապովին աջողվի վերջ դնել ընդհարումներին։ Կարևոր է, որ այստեղի Թուրք և քիւրդ բէգերը չը յուզեն Թուրք ամբոխը։ Շուշուց սպասվում են մի կամ երկու Թնդանօթ, մօտ մի հարիւրեակ հետևակ և մի վաշտ հեծեալ զօրք։ Հայ ժողովուրդը պատրաստ է հաշտվելու, բայց երկիւղ է կրում, որ Թուրքերը նորից խանգարեն հաշտութիւնը։

Շուշի, յունվարի 28-ին գեներալ-մայօր Գոլոշչապովը հեռագրում է Կովկասի Փոխարքային.

«Այսօր, յունվարի 22-ին, առաւօտեան ժամի 9-ին ընդունեցի հայերի և մուսուլմանների ընտրեալներին, որոնք վերադարձել են Գորիսից և որոնք անձնականապէս յայտնեցին ինձ և գրաւոր հաստատեցին թէ շրջակայքի բնակչութիւնը ուրախացած է հաշտութիւնով և թէ Շուշի-Եւլախ ճանապարհը բոլորովին ազատ է և անվտանգ. հրամայեցի Զանգեզուրի գաւառապետին Գորիս պահանջել ազդեցիկ բէկերին այն տեղերից, որտեղ դեռ ևս վերջացած չեն ընդհարումները, յայտարարելու համար արդէն կայացած հաստատ հաշտութեան մասին և միջոցներ ձեռք առնել վերջնականապէս հանգստացնելու ազգաբնակութիւնը, ազդարարելով վերջինիս—որ մեղաւորները կը պատժվեն անխնայ։ Այդ տեղերը կերթան մի քանի ժամանակից յետոյ Շուշուց ընտրված ազդեցիկ մարդիկ այդ խաղաղ նպատակով։ Երէկ երեկոյից ընդհատված է հաղորդակցութիւնը Ագդամ-Եւլախի միջև. արեցի կարևոր հրամանները.—եթէ այսօր չը վերականգնվի հաղորդակցութիւնը, այն ժամանակ կը զեկուցանեմ Թիֆլիս՝ միջոցներ ձեռք առնելու համար։ Այսօր Շուշում լիակատար հանգստութիւն է. հայերն արդէն ազատ համարձակ շրջում են Թուրքերի հետ և ընդհակառակը։ Ուտելեղէնների գները զգալի կերպով իջան. ամեն օր շրջակայ գիւղերից բերում են մթերքներ. Երէկ Գորիս ուղարկեցի երկրորդ Վոլսկի գնդի չորրորդ հարիւրեակը»։

Ոսկանապատ, Գանձակի շրջանում, յունվարի 18-ին։

Այսօր մի խումբ բաղացիներ՝ Թւով 13 հոգի՝ ուղեկցութեամբ երեք բրաջուրցի երիտասարդների, սայլերով ճանապարհ են ընկնում դէպի Գանձակ՝ Ելենենդօրֆի միջով, մի շատ բանուկ ճանապարհով, որը անցնում է աւազակային որջ Թափալհասանլուի մօտով, բնակիչներից դատարկված դեռ Գանձակի կոտորածից առաջ, հասկանալի է՝ թէ ինչ նպատակով... [illegible] Թափալհասանլուեցիները դարան մտած գազանների նման միամիտ զոհերին են եղել սպասելիս. Հէնց որ ճամբորդները հաւասարվել են գիւղին, դարանամուտ բօրենիները դուրս են եկել Թագստի տեղից և գիւղի բարձրութիւնից մի գալպ տուել, անզէն և տմարդի բրաջուրցիները յետ են փախել, Թողնելով Թշուառ բաղացիներին գազանների ճանկերում։ Ջինգիզխանի այս «համեստ» աւազակները նախ տեղն ու տեղը արախողխող են անում մի պառաւ կնոջ և նրա հիւանդ որդուն, ապա դիակների վրա նաւթ ածելով վառում են, սակայն հարային ուշ հասնող ոսկանապատցիները կրակը հանգցնում են։

Երկու տղամարդ փախչելով են ազատվում, իսկ ինը հոգու—աղջիկներանց և հարսներին գերի են տանում դէպի նահանգական Գանձակ քաղաքի քսաներորդ դարի խուժադուժը—Բաղմանլարը։

Հինգ սայլեր խոտով և տնային իրերով հրդեհի են մատնում, իսկ նրանց լծկան կենդանիներին՝ ութ զոյգ՝ քշում տանում են։ Գերի տարած Թշուառների մասին դեռ ճիշտ տեղեկութիւնները պակասում են։

Այդ արիւնոտ դրամային լուռ հանդիսատես են եղել Ելենենդօրֆի կազակները, որոնցից ոչ այնքան հեռու՝ գետի միւս ափի վրայով հրացաններ արձակելով անցել են գազանաբարոյ Թափալհասանլուեցիները իրանց կենդանի աւարով։

Բայց ցաւալին այն է, որ նոյն այդ կազակները ահա 4-5 օր է, որ Ելենենդօրֆով անց ու դարձ անող հայերին գինաթափ են անում, տիրող աչքի առաջ զէնքերը կոտրատում ու յետ տալիս և այդպիսով դիւրութիւն տալիս գազան Թուրքերին անարգել և անպատիժ սպանել անպաշտպան հային, կողոպտել նրա գոյքը և առևանգել նրա կնոջն ու աղջիկներին...

Նիկ. Գրիգորեանց

Որքա՞ն է չարաբաղդ Բաղա գիւղի զոհերի Թիւը։

Այդ հարցը յաճախ տուել են իրանց բաղացիները, ուղարկել են մարդիկ տեղեկութիւններ ժողովելու և եկել են այն եզրակացութեան, որ զոհ է գնացել 118 հոգի։

Բացի դրանից տեղեկութիւններ կան, որ բաղացիներից մի քանիսը գերութեան մէջ են Թուրքերի մօտ։ Օրինակ, Շուշանեանց ընտանիքից գերի են գտնվում Ղօլլասարլու գիւղում 8 տարեկան մի տղայ և երկու աղջիկ 6 և 3 տարեկան։

Բաղացիների մի խոշոր Թիւ այժմ գտնվում է Չարդախլու գիւղում, միւս մասը ցրվել է Շամշադինի գիւղերում. կան ընտանիքներ, որոնք ապաստան են գտել Թիֆլիսում և Գանձակում։

Բաքու, յունվարի 22-ին

Անսպասելի պայթիւն սկսվեց Թուրքական Թաղում։ Քաղաքը մատնվեց սոսկալի խուճապման, ժողովուրդը յանկարծակի եկաւ...

Արիստօկրատ մտածողների հետ և ամբոխի մեծամասնութիւնը պատրաստվում է դէպքը վերագրել «բայրամին», սակայն մենք հեռու ենք այդպէս կարծելուց. տիրող հրացանաձգութիւնը յիշեցնում է մի սարսափելի պատերազմական բանակ, իր կանոնաւոր զալպերով... Սկամայ մտածում ենք, արդեօք այդ բայրամի տակ Թաղնված չէ ինչ որ «դժոխային կօմէդիա»... Չենք պնդում, այլ այնպէս հակված ենք կարծելու։

Նոր եմ վերադարձել Բալախանուց, սակայն մնում եմ ընկերներիս դրութեան մէջ. կօզակներից յոյս չը կայ. նաւթահանքը պիտի տուժէ... Եթէ իրաւ է...

Այո, եթէ իրաւ է...

Ամայութեան Աստուածն է Թևակոխել մեր քաղաքի վրա... չարիքի խրախճանն է հանդէս եկել իր դժոխային համերգով... «Սրբահամ» է պակասում միայն զոհի տեղանի վրայից։

—Խօսք ունիք...

Ա. Ջանեան

Լոր գիւղ, (Զանգեզ. գաւառ)։ Դարաբաս հայ-Թուրքական գիւղ էր բաղկացած երկու հարիւր յիսուն տնից։ Երկու հարիւրը Թուրք, յիսունը հայ։ Դեկտեմբեր ամսի 26-ին ձեզ յայտնի կռւից յետոյ Թուրքերից շատ կոտորված կայ, մինչև երկու հարիւր յիսուն հոգի։ Հայերից քիչ է ու բոլորովին ճիշտ չէ կարելի որոշել, որովհետև ամբողջ գիւղը գաղթել է հայկական գիւղերը։

Թուրքերից կենդանի մնացածները գաղթում են Թուրքական Աղուդի և Վաղադի գիւղերը։ Երկրորդ անգամ առաւօտը Վաղադի գիւղի Թուրքերը և ուրիշ շատերը, Թւով 800 հոգի, կրկին յարձակվում են Դարաբասի վրա Թալանելու և կենդանի մնացածներին կոտորելու համար։ Մի ժամվայ դիմադրութիւնից յետոյ Թուրքերը չը դիմանալով հայերի գալպերին, նորից զգալի կորուստով յետ վերադարձան ու այժմ Դարաբասի մեծ հայ-Թուրքական գիւղը ներկայացնում է մի կատարեալ աւերակի կոյտ։

Աղուդի, Վաղադի և շրջակայ Թուրք գիւղերին ղեկավարում է նախկին պրիստաւ Նախսուարը ու իր պաշտօնաթող ստրաժնիկները, որոնք ման են գալիս իրանց համազգեստով։

Մ. Ստեփանեան

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Գուրիա, 22 յունվարի։ Պէտք է ճիշտը խոստովանել, որ գուրիացիները մեծ յօժարակամութեամբ են կատարում գեներալ Կրիլովի պահանջները. գիւղերից բերում են հրացաններ, գալիս են Թէ նոր և թէ փախած զինուորները։ Ձերբակալութիւնները գնալով աւելանում են։ Այսօր կալանաւորեցին «Ցնոբ. Փուր.» լրագրի աշխատակից Իլիկօ Նակաշիձէին և նրա կնոջը՝ Նինօին։ Նինօ Նակաշիձէին իսկոյն և եթ արձակեցին։ Կալանաւորեցին նոյնպէս բժիշկ Գ. Խարազովին, մի քանի այլ անձանց և մի զինուորի։ Ժողովուրդը, ինչպէս երևում է, վիզը ծռել է, բայց երևում է, որ այդ հանգամանքը չէ գոհացնում պ. Կրիլովին։ Այսօր առաւօտվանից մայդանի վրա անսովոր շարժումն էր նկատվում։ «Շտաբում սև դրօշակ են բարձրացրել և ինչ է նշանակում այդ», հարցնում էին սարսափած մարդիկ միմեանց։ Որպէս պատմում են, մի օֆիցեր ասել է Թէ դա նշանակում է, որ բոլորին էլ մահ է սպասում։ Շտաբի վրա ծածանվում էր մուգ-կապոյտ դրօշակը, որի նշանակութիւնը ոչ ոք չը հասկացաւ։ Ժամի 12-ը կը լինէր, որ այս ու այն կողմից սկսեց լսվել, Թէ կօզակների հարիւրեակը գնաց դէպի Ալ. Թումանաշվիլիի տունը։ Ցիրաւէ, հինգ րոպէ չանցած՝ շրջապատեցին Թումանաշվիլիի տունը։ Թումանաշվիլիին մի քանի օր առաջ արձակել էին բանտից և պարտաւորեցրին, որ իր որդոցը բերել տայ, որոնք մի ինչ-որ բանի մէջ մեղադրվում են։ Թումանաշվիլիի տունը Օզուրգեթի ամենագեղեցիկ տունն էր։ Մենք տեսնում էինք, Թէ ինչպէս էին կրում իրեղէնները այդ տնից և կուտակում էին մի տեղում։ Ասում էին, որ իրաւունք էին տուել դուրս կրել մի քանի իրեղէններ։ Ապա տան պատուհաններից երևաց կարմիր բոցը և տունը այրվեց ամենի աչքի առաջ։

Մի խումբ մարդիկ այդ ժամանակ փողոցում խնդրում էին մի օֆիցերից պատրոններ, որպէսզի կարողանան բերել հաւաքած րէվօլվէրները։ Թումանաշվիլիի տնից յետոյ աւերեցին Մամուլաշվիլիի տունը և պատրաստվեցին այրելու Լոմջարիի տունը, սակայն իմացվեց, որ Լոմջարին տուն չունի։ Երէկ եկաւ մի հարիւրեակ կօզակ։ Մակվանէթում կօզակները ցրվեցին։ Նակաշիձէի տան պահարանները կոտրված գտան, մի ուրիշ տնից գորգ անհետացաւ և այլն։ Ամենքը կարծում էին, որ այսպէս Թէ այնպէս, խաղաղութիւն է վերահաստատվել, սակայն այսօրվայ դէպքերը ժողովրդի այդ յոյսն էլ ի դերև հանեցին։ Ասում են, որ վաղը Թագաւորին հաւատարիմ լինելու ընդհանուր երդումն է լինելու։

Հաւաքած հրացանները յետ ուղարկեցին Բաթում։ Խստութեամբ որոնում են զէնքեր։ Մի քանի օր առաջ գերեզմանատան տաճարն այստեղի քահանայ Դումբաձէին և բազմաթիւ գերեզմաններ փորեցին, կարծելով, որ զէնքեր են Թաղված այնտեղ։ Այդ բոլորը, ի հարկէ, կատարվում էր լրտեսների շնորհիւ, որոնց Թիւը շատանում է և Գուրիայում։

Ճիաթուրի։ 17-ին յունվարի գեներալ Ալիխանովի մօտ գնացած պատգամաւորութիւնը չը կարողացաւ խաղաղութիւն տալ ազգաբնակութեանը և մեզ մօտ շարունակվում են նոյն խառնակութիւնները, որպէս և առաջ։ Ալիխանովը խոստացաւ ժողովրդին, որ եթէ իր պահանջները կատարվեն, այն ժամանակ վերջ կը տրվեն հրդեհումներին և ճնշումներին։ Այդ յոյսով ժողովուրդը վերադարձաւ իր տները և սկսեց փող ժողովել։ Ճիաթուրիի սարսափահար եղած խանութպանները կամաց-կամաց սկսեցին առեւտուրը։

Յունվարի 23-ին, առաւօտեան, ճիշտ պայմանաժամին, իւրաքանչիւր մարդ իր բաժին ընկած վճարը տարաւ Ճիաթուր՝ գեներալ Ալիխանովին՝ պօստով ուղարկելու համար։ Գիւղի բնակիչները դեռ ևս չէին վերադարձել, որ երեկոյեան գնացքով եկած 200-աչափ կօզակներ մտան Ճիաթուրի։ Վաճառականները, ովքեր կարողացան, կրկին սկսեցին դադարկել իրանց նոր լցված խանութները։ Սկսվեցին խանութների հրդեհումները։ Այրվեցին տասներկու տներ։

Սուրամ։ Մեր գիւղաքաղաքը ծանր դժբախտութեան մէջ է։ Բնակիչները չը գիտեն որտեղ ազատեն իրանց գլուխը և ինչ հնարք գործ դնեն, որ կեանքի գոնէ այնպիսի ապահովութիւն ունենան, որպէս Թիֆլիսումն է։ Ամեն օր Սուրամի փողոցներում կը հանդիպէք կահ-կարասիքով և տան իրեղէններով լցված սայլերի, որոնց հետեւում են դառն վշտով բնակիչները, մարդ, կին, մեծ թէ երեխայ։ Հեռանում են շտապով, իրանք էլ չը գիտեն թէ ուր, որովհետև ամեն տեղ էլ երկիւղ կայ։

Այստեղ ժամանակաւորապէս բանակ դրած զօրքը յունվարի 1-ից հեռացաւ, սակայն տեղական զօրքը (մօտաւորապէս հարիւր մարդ) կրկին մնաց։ Ամեն օր բնակիչները գնում են զօրքի հրամանատարի մօտ և գանգատվում են ասելով, թէ մենք խաղաղ կեանք ենք ուզում, ոչինչ հակառակութիւն մեր սրտում չունենք, ուստի հրամայեցէք, որ զինուորները խուզարկութիւն չը կատարեն տներում և փողոցներում։

Յունվարի 20-ին Սուրամում լուր տարածվեց, թէ ցուցակագրված են մի քանի տներ, որ պէտք է այս օրերս հրդեհվեն։ Եօթը տների անունն էին տալիս։ Այդ տների հարեւանութեամբ ապրող բնակիչները շտապով դատարկեցին տները և լաց ու կոծով փոխադրվեցին ուրիշ թաղեր։ Սարսափահար բնակիչները նոյն օրն և եթ մի քանի մարդիկ ընտրեցին և ուղարկեցին զօրքի հրամանատարի մօտ։ Հրամանատարը պատասխանեց. «Մենք մտադիր չենք տներ հրդեհել և ոչ էլ այրել ենք»։ Վերջը, մի կերպ, հրամանատարը համաձայնվեց, որ սուրամցիները պահապաններ կանգնեցնեն։ Պահապանները առանց զէնքի պէտք է շրջեն զինուորների հետ միասին։

(Ցնոբ. Փուրցելի)

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ Պ. ԻԲՐԱՀԻՄՈՎԻ «ՈՒԼՖԵՏ» ԼՐԱԳԻՐԸ

Ռուսաստանի ամեն կողմերից Պետերբուրգ հաւաքվեցին Թուրքերը մահմեդական համաժողովին, որին այնքան սպասում էին և որի համար վաղուց պատրաստվում էին։ Այդ համաժողովը նշանակեց մի շարք նշանաւոր հարցեր քննութեան համար, որոնք ահագին նշանակութիւն ունեն ռուսաց մահմեդականների համար, և որոնք վերաբերում են նրանց ներքին կազմին, հոգևոր կեանքին և տնտեսական շահերին։ Ի հարկէ, այդ համաժողովը նրանց համար, ըստ երեւոյթին չափազանց ցանկալի և լուրջ գործ է, սակայն մի և նոյն ժամանակ հիմքեր կան նրա վրա նայելու և ուրիշ կողմից,

Յուզումը ռուսաց մահմեդականների միջև կասկածից դուրս մի փաստ է։ Կովկասը, ի հարկէ, իր այժմեան շփոթով ամբողջապէս պարտական է մահմեդական սեպարատիստներին, որոնք գործում են երիտասարդ Թուրքերի կուսակցութեան ազդեցութեան տակ Ստամբօլում։ Ռուսաց մահմեդականների միջև սկսված քաղաքական շարժում սնվում էր և սնվում է սօցիալ-դեմօկրատիական բանակի ռուսական ազդեցութեամբ, որը հաճութեամբ օգուտ քաղեց արդէն պատրաստ հողից՝ յեղափոխական հրդեհ վառելու համար։ Այդ ապստամբական հոսանքի պտուղն էր նախ՝ յայտնի մահմեդական համաժողովը Նիժնի-Նովգորոդում այս տարվայ ամառը, ուր զանազան կողմերից հաւաքված Թուրքերը ջերմ կերպով խօսում էին այն մասին, թէ պէտք է միանալ ռուսական ըէժիմի դէմ կռուելու համար ի փառս իսլամի և երկրորդ, անցեալ տարվայ դեկտեմբերին Պետերբուրգում տեղի ունեցած աւտօնօմիստների համաժողովը, որը գումարել էր ոչ միայն ամեն ցեղի և տեսակի մահմեդականներին, սիւննիներին և շիաներին, ծայրերի և կենտրոնների մահմեդականներին, այլ և մալօրուսներին բելօրուսների հետ միասին, որպէս աւտօնօմիայի և «ինքնորոշման» փափագողներ։

Այդ համաժողովի կազմակերպողների և համիսլամութիւնը պաշտպանելու համար մահմեդական միութեան ամենակատաղի կողմնակիցների միջև կայ մի Թուրք Տարա քաղաքից, Իբրահիմով ազգանունով, որը միշտ Պետերբուրգից տեղեկութիւններ է հաղորդում իր հայրենակիցներին Վօլգայի վրա՝ վերոյիշեալ համաժողովի մասին։ Առաջի նիստից յետոյ նա հեռագրեց «Казанск. Вѣст.»-ին հետեւեալը՝ «Դեկտեմբ. 12-ին Թուրքերը Պետերբուրգում համաժողով կազմեցին, որին հրաւիրված էին ներկայ լինելու Բօբրիշչեվ-Պուշկին, պրոֆ. Կարէեվ, պրոֆ. Միլիւկով, Ստրուվէ, Րօդիչեվ, Բօդուէն դէ-Կուրնէ և այլն։ Համաժողովը սկսվեց երեկոյեան ժամի 8-ին և տևեց մինչև գիշերվայ ժամի 2-ը դէ-Կուրնէյի նախագահութեամբ։ Նիստում ակնյայտնի դարձաւ, որ Թուրքերը միահամուռ ուզում են յարել սահմանադրական-ռամկավար կուսակցութեանը։ Այսօր նորից ժողով է նշանակված։ Մանրամասնութիւնները կը յայտնեմ։—Իբրահիմով»։ Մի քանի օրից յետոյ նոյն թերթը դարձեալ հաղորդում է դեկտեմբերի Թուրքական միտինգի մասին, յիշեալ Իբրահիմովի անունով, և նորից հաստատում է, որ ժողովի տրամադրութիւնը դէպ ի սահմանադրական-ռամկավար կուսակցութեան կողմն է։ Ինչ է ներկայացնում իր կողմից այդ կուսակցութիւնը, ինչ միտումներ ունի նա, արտայայտելով իր «credo-ն միայն ընտրեալներին և ծածկելով ուրիշներից իր գաղտնիքները, այժմ հետզհետէ արդէն պարզ իրողութիւն է դառնում և որի հետ ժամանակին պէտք է լուրջ գործ ունենալ։ Նոյնպէս պարզվում է պ. Իբրահիմովի տուած համառօտ տեղեկութիւններից, որ հետզհետէ մեր Թուրքերը ներշնչվում են սեպարատիստական ձգտումներով ծայրայեղ ձախակողմեանների հովանաւորութեան ներքոյ։

Այժմ լոյս տեսաւ Պետերբուրգում Թուրքերէն մի նոր թերթ արաբական աղմկալից ու նշանակալից «Ульфетъ» անունով (որ նշանակում է՝ միութիւն), որի հրատարակիչն է միևնոյն անխոնջ պ. Իբրահիմովը, գլխաւոր կազմակերպողը Թուրքական քաղաքական համաժողովների և այժմ յայտարարված համամահմեդական ժողովի—Պետերբուրգում։ Մանրամասն կերպով թուել այն բոլորը ինչ որ «Միութիւն» անուան տակ տպագրում է պարոն Իբրահիմովը իր նորածին թերթի մէջ, մեզ թոյլ չէ տալիս տեղի սղութիւնը, և եթէ կարիք լինի, մենք այդ կանենք մի այլ անգամ։ Իսկ այժմից մենք կուզենայինք ասել, որ պ. Իբրահիմովի «Միութիւնը» բոլորովին յատուկ գոյն և ներքին իմաստ ունի։ Դա էտիկայի, կուլտուրայի և քաղաքացիութեան համամարդկային պրինցիպների վրա հիմնված միութիւն չէ, որ թոյլ է տալիս մարգարէի երկրպագուներին մերձենալ քրիստոնէական աշխարհի հետ։ Ոչ, բոլորովին ուրիշ միութիւն է զբաղեցնում պ. Իբրահիմովին, որը քարոզում է մահմեդականներին միանալ յանուն իսլամի, պանիսլամիզմի յաղթանակի երազներով և կոչ անելով հաւատակիցներին համախմբվել կանաչ դրօշակի հովանու տակ՝ կռիւ մղելու և դիմադրելու... Գուցէ «Ульфетъ»-ի միջոցով յաջողվի գտնել Պետերբուրգում կայանալիք համամահմեդական ներկայ ժողովի բանալին՝ պարզելու նրա իսկական նպատակը... «Разсвѣтъ»

ՄԱՄՈՒԼ

Վենետիկի «Բազմավէպը» այս տարվայ յունվարի ամսական թերթի մէջ «Ջուր Ջանքեր» խմբագրական յօդուածով սաստիկ պախարակում է այն տգեղ սովորութիւնը, որ մուտք է գործել հայ մամուլի մէջ, այն է րէկլամների սովորութիւնը, որ նա անուանում է «ծանուցմանց ուռուցիկ և կրպակային ձևակերպութիւն»։

Եւ, ճշմարիտ, այս երեւոյթի վրա արժէ ուշադրութիւն դարձնել։

Րէկլամ և մամուլ։

Րէկլամ և գրականութիւն։

Սազակա՞ն են, պատշա՞ճ են իրար կողքի այս երկու գաղափարները։

Այս հարցը որոշելու համար տեսնենք ով է րէկլամը գործադրողը կեանքի և գրականութեան մէջ։

Րէկլամը սկզբում գործադրեցին եւրոպական առեւտրականները, խանութպանները՝ յաճախորդներ գրաւելու համար։ Գործադրելով նախ իբրև ծանուցումն, հետզհետէ դարձաւ խաբէութեան և հրապոյրի միջոց։ Դժբախտաբար նա շուտով ստացաւ ընդարձակ նշանակութիւն և ընդարձակագոյն իրագործումն կեանքի ուրիշ ճիւղերի և նաև մտաւոր ու բարոյական ասպարէզների մէջ։ Նրա օգնութեան դիմեցին հրատարակիչները, լրագիրները բաժանորդներ գրաւելու համար։ Բայց գրականութեան և մամուլի մէջ սովորաբար նրա օգնութեան դիմում էին փողոցային թերթերը կամ զուտ մերկանտիլ, շահասիրական բնաւորութիւն կրող հրատարակութիւնները։ Մինչև այսօր հիմնված չէ, որ և է մի լուրջ մաքուր թերթ, որ և է մի ականաւոր մտաւորական հրատարակութիւն դիմէր րէկլամի օգնութեան. երբեք պատահած չէ, որ օրինակ, անգլիական «Թայմս» լրագիրը, ֆրանսիական «Տան» լրագիրը, ռուսաց «Рус. Вѣд.» լրագիրը, «Вѣст. Ев.» ամսագիրը հրատարակէին փքուն, ուռուցիկ յայտարարութիւններ, կամ խոշոր տառերով տպված մեծ յայտարարութիւններ ի ցոյց դնէին մագազիններում, վիտրիններում, այդ մագազինների ապրանքը գովող յայտարարութիւնների հետ միասին, ինչպէս թոյլ են տալիս իրանց անել փողոցային և մերկանտիլ թերթերը։

Հասկանալի է «Բազմավէպի» բողոքը, երբ ասում է.

«Եւ ինչո՞ւ միթէ չը հարուածենք, չը ձաղկենք այսպիսի անարգ գրութիւն մը, և մեր միջէն չը անհետացնենք քաղաքակիրթ համարուած Եւրոպայի այդ մէկ վիժածը, որ արդէն անոնց ընտրելագոյն կրթական հաստատութիւններէն և ականաւոր մտաւորական հրատարակութիւններէն շատոնց մերժուած, հալածուած՝ եկեր կարծես մեր քովն է ապաստաներ։»

Ամսաթերթը, ի հարկէ դէմ չէ համեստ յայտարարութիւններին, ծանուցումներին, այլ դէմ է նրանց «ուռուցիկ և կրպակային ձևակերպութեանց»։

Որ և իցէ բան մը և կամ անոր փոփոխութիւնը համեստօրէն յայտարարող ազդ մը՝ հարկ եղած ժամանակ տպագրութեան ձևով հասարակութեան ծանուցանելն՝ ըստ ինքեան օգտակար բան մ՚է. բայց վնասակար կ՚ըլլայ այն պարագային՝ երբ համեստութեան սահմանէն դուրս կ՚ելլէ, երբ հրատարակողն անգամ գիտակից է՝ որ այդ ազդը չափազանցութիւն մ՚է և իրականութեան չի համապատասխաներ, այլ աշակերտի թոշակ մը կամ ընթերցողի բաժանորդագին մը աւելի կորզելու համար է ըրածը, և որուն արդարացումը իր մտքին մէջ (և երբեմն նաև լեզուին վրա) այս է. «Ի՞նչ ընեմ, հիմակուան սովորութիւնն է. այսպէս չընես՝ չ՚ըլլար. նորելուկ մ՚է՝ որուն ամենքը կը հետևին. միթէ այս ինչ վարիչը և կամ այն ինչ խմբագիրն ալ այսպէս չե՞ն ըներ»... Ճիշդ, ինչպէս կեղծ ակնոցներ ճշմարտի տեղ ծախող գոհարավաճառ մը պիտի ըսէր իր խաբեբայութեան գիտակիցներուն։

Ուրեմն ինչո՞ւ կը դառնաք գանգատիք, ո՛վ գիտութեան կեղծ գոհարները ճշմարտի տեղ վաճառող դաստիարակներ և խմբագիրներ, թէ ձեր խնամոց յանձնուած դպրոցին՝ ազգը համբակներ չի հասցըներ, և կամ ձեր հրատարակած թերթերուն՝ ընթերցողներ չի մատակարարեր.... Ինչո՞ւ կ՚ամբաստանէք, կը մեղադրէք այն ուղղամիտ և զգուշահայեաց գիտութիւն գնել ուզողները, որոնք յետ միանգամ խաբուելու ձեզմէ, երկրորդ անգամ մ՚ալ ձեր այդ զզուելի խանութներուն դռներէն չանցնելու համար՝ տարբեր փողոց մը կը քալեն, որպէս զի չըլլայ թէ յանկարծ ձեզի հանդիպին, և օձիքնին ձեր ձեռքէն ազատելու համար՝ պատռելու վտանգի մէջ դնեն։—Միթէ այդ երեսդարձութիւնը ձեր դպրոցէն, ձեր լրագրէն կամ ուսումնաթերթէն՝ միակ և արժանաւոր պատիժը չէ՞ ձեր գործած կեղծ գիտնական—վաճառականութեան, համակշիռ այն պատժոյն՝ որուն կ՚ենթարկուին պետութեան օրէնքներէ՝ սուտ գոհարները ճշմարտի տեղ ծախող խաբեբայ ակնավաճառք։—Կ՚ուզէք այդպիսիներ չհամարուիլ, կը փափաքէք հասարակութեան յարգանաց և յաճախորդութեան... Ո՛ն, ուրիշ միջոց չկայ, կամ հեռացէք այդ խեղկատակ ասպարէզէն՝ եթէ մտաւոր իսկական գոհարներ չունիք բաշխելու ժողովրդեան, և կամ փոխեցէք ձեր փորձարանաց և ձեր գիտական հրատարակութեանց կեղծ ապրանքները իրականներու հետ, ձեր առաջարկած շինծու ծրագիրները՝ իրեն իսկական և [illegible] գործադրութեան հետ... Եւ ահա այն ատեն պիտի տեսնէք որ ալ գանգատներ ընելու պէտք պիտի չունենաք, և զուր տեղ՝ զուր ջանքեր պիտի չթափէք ձեր թերթերու սիւնակներուն մէջ՝ ձեր ազգակիցները գիտութեան և ընթերցման անսիրողներ կոչելու։

Նոյն խմբագրական առաջնորդող յօդուածի մէջ «Բազմավէպը» խօսում է նաև այն նորանոր թերթերի և պարբերական հրատարակութիւնների դէմ, որոնք սունկի պէս վերջերս սկսել են բուսնել՝ շուտ թառամելու համար։ Բուլղարիայում, Եգիպտոսում, Ամերիկայում և այլ տեղերում, այժմ հրատարակվում են բազմաթիւ նոր թերթեր, որոնց մեծամասնութիւնը երևան է գալիս լոկ անձնասիրական կրքերի և ցուցամոլութեան յագուրդ տալու նպատակով։

Կ՚արժէ՞ արդեօք որ ազգայինք անտեղեակ ըլլան կարգ մ՚ալ օրագրներու և ուսումնաթերթ կոչուածներու, որոնք իրենց խմբագիրներուն հետ կամ դրամաշահութեան հրապարակ մը մանել կարծելով և կամ անձնասիրական կիրքերու և ցուցամոլութեան մղմամբ, վայրի սնկերու նման ընթերցող հասարակութեան չորս դին կ՚ընձիւղին և կը թառամին չորնան, քանի մ՚ամսուան կամ քանի մը տարուան անհամ—անհոտ—անգոյն յօդուածներէ անօծ հրատարագին կեանքէ մը վերջը։ Եւ սակայն ամէն այդպիսի հրատարակութիւնք, որոնք նախ րէկլամ-ներու շինծուներով կը թնդացընեն ընթերցասէրներու լսելիքը, կը յայտարարեն միշտ ի սկզբան՝ թէ ասպարէզ եկած են լուսաւորութեան ջահը ձեռքերնին՝ ազգին մտաւորական խաւարը փարատելու, և կամ թէ անդրնդատուր գրականութիւնը խլելու իր կործանման գահավիժէն վրայէն և Պառնասոսի բարձունքը վերափոխելու...

Ինչ ազգ, խեղճ գրականութիւն... Չըլլա՞յ թէ արդեօք այդ մեր ազգին ու գրականութեան աչքերը՝ ո՛րչափ հրատարակութիւններէ ճառագայթած չափազանց լուսոյ կիզիչ պայծառութենէն է՝ որ կը շլանան, ո՛րչափ [illegible] լուսոյ յորդութենէն է՝ որ կը կուրանան։...

Այդ տխուր երեւոյթներին կարող է վերջ տալ միայն անաչառ և խիստ քննադատութիւնը և «Բազմավէպի» յօդուածի հեղինակ Հ. Ա. Տէրոյեան հետևեալ եզրակացութեամբ է փակում իր խօսքերը.

Այսպիսի անաչառ և խիստ և անհրաժեշտ քննութեան մը հետևանքն այն պիտի ըլլայ՝ որ կամ ճանչնաք ձեր անձեռնհասութիւնը այդ ասպարէզին մէջ և անկէց քաշուիք հեռանաք, և գնաք ձեր կարողութեան համապատասխան դիրք մը բռնելու ընկերութեան մէջ, և կամ շտկէք ձեր թիւր ըմբռնումը՝ որ ձեր բարձր պաշտօնի կոչման անհամաձայն է, և ուղիղ հիման, հաւատարիմ և անկեղծ գործունէութեան, և գիտակից ձեռնհասութեան մը վրա ամրացնէք ձեր ջանքերը, որոնք այն ատեն միայն՝ պիտի դադրին ըլլալ... զուր ջանքեր, որովհետև պիտի ըլլան անկեղծութեան մ՚արգասիքներ և հետևաբար ինձ ալ և ինձ նման փափաքողներուս ալ՝ առիթ պիտի տան մխիթարութեամբ գիտելու և հռչակելու ձեր օգտակար ջանքերուն արդիւնքները։

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Ժողովրդական տնտեսութեան մէջ գիւղատնտեսական-արհեստագիտական մի ճիւղ է կազմում նաև գորգագործութիւնը։ Այդ արհեստը, որքան որ ծաղկած դրութեան մէջ է հարևան գաւառներում, Նոր-Բայազէտի գաւառում, ընդհակառակը, շատ յետ է մնացել։ Հայաշատ այդ ամբողջ գաւառում հատ-հատ միայն կը ճարվեն գորգագործ կանայք, այն ինչ մեզնից ոչ հեռու գտնված Ղարաբաղիայում արհեստագիտական այդ օգտաւէտ ճիւղը ծաղկած դրութեան մէջ է գտնվում։ Այնտեղ գրեթէ բոլոր կանայք ծանօթ են այդ արհեստի հետ, մինչդեռ մեզանում միմիայն Թուրքերն են դրանով պարապում։ Օրինակ, մեր գաւառի Զօթ Թուրքաբնակ գիւղում և շրջակայ բազմաթիւ մուսուլման ընտանիքներում պարապում են գորգագործութեամբ և տարեկան ամեն մի ընտանիք ունի իր ծախու «գարաները»—խալիչաները, որոնցից մէկի գինը մեզանում տասնեակ րուբլիներ արժէ, ի հարկէ գերազանց տեսակները։

Գորգագործութիւնը մեր գաւառում տարածելու համար մի քանի տարի առաջ մի փոքր ընկերութիւն կազմվեց մեզանում, որը այդ արհեստը առաջ տարաւ մօտ մի տարի, հրաւիրելով իբրև վարպետ-գործող վերոյիշեալ Զօթ գիւղացի մի Թրքուհու՝ փոքր վարձատրութեամբ։ Սակայն այդ ամբողջ ժամանակի ընթացքում միայն մի մեծ «խալիչա» գործվեց, ուստի ընկերութիւնը վնասված լինելով արհեստանոցը յանձնվեց տեղիս դպրոցական վարչութեան, որը պահում է մինչև օրս։ Անցնելով արհեստանոցն ուսումնարանական վարչութեան ձեռքը, վերջինս դուրս անելով Թրքուհի վարպետին՝ հրաւիրեց տեղացի օրիորդ Ս. Աղաջանեանցին, որը գորգագործութիւնը սովորել էր Ղարաբաղիայում, և որը ցաւ է ասել, այս օրերս վախճանվեց։ Հանգուցեալը, մօտ երկու տարի կառավարելով արհեստանոցը, ունէր մի քանի աշակերտուհիներ, որոնք դժուար թէ նրանից յետոյ կարողանան գործը առաջ տանել, ուստի գորգագործական արհեստանոցը փակվելու վտանգի առաջ է կանգնած, քանի որ դպրոցական վարչութիւնը մի փոքր նիւթական վնաս կրելով անշուշտ [illegible] կը լինի այդ ձեռնարկութիւնից, որը սակայն շատ նպատակայարմար էր այդ զբաղմունքը տարածելու մեր ընտանեկան շրջաններում։

Ցանկալի կը լինէր, որ մեր քաղաքացիներից մի որոշ դասակարգ մի փոքրիկ ընկերութիւն կազմելով, սատարէր այդ ձեռնարկութիւնը իբրև ընտանեկան տնտեսական մի ճիւղ տարածելու ժողովրդի մէջ, որը ամեն կողմից կարօտ է այդպիսի ձեռնարկութիւնների։ Կրկնում ենք, մեզանում շատ յարմար է տարածել տնայնագործական այդ արհեստը, որովհետև ամեն մի տուն ունի իր բուրդը, որը շատ էժան գներով ծախում է իբրև հում նիւթ։ Յիշենք նաև, որ իւրաքանչիւր ընտանիք մեր գաւառում գիտէ բրդից թելեր մանել, ոլորել և նոյն իսկ ներկել այլ և այլ գործուածքների համար (և ոչ գորգերի) օր. չուլ, փալաս, զուլալ, ջեջիմ, չուալ, չախու և այլն։

Աւելացնենք և այն, որ եթէ դպրոցական վարչութիւնը այդ արհեստից օգուտ չէ ունեցել, մասնաւոր մարդիկ, իբրև անհատներ, կարող են և վաստակ ունենալ, մի կողմ թողած արհեստագիտական քաղցր նպատակը և ձեռնարկութեան տարածելը գաւառական ժողովրդի մէջ, որի տնտեսութեան մէջ իր նըպաստաւոր տեղը կունենայ ապագայում։ Թող ուրեմն ձեռնհաս մարդիկ իրանց գիւղատնտեսական ձեռնարկութիւնների շարքում (անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն, շերամաբուծութիւն, մեղուաբուծութիւն և այլն) մտցնեն նաև գորգագործութիւնը։ Դա փոքր բան չէ գաւառայի ընտանիքի համար իբրև եկամտի աղբիւր։ Չը մոռանանք յիշել, որ երբ մեզանում բացվեց գորգագործական արհեստանոցը, «Մշակը» իր անկեղծ ուրախութիւնը յայտնեց իր առաջնորդողում այդ գործի մասին։

Գ. Մինասեանց

ՂՈՒԲԱՅԻ ԳՈՐԾԵՐԻՑ

Քաղաքի մօտ Ղարա-չայ գետակի ձախ կողմը գտնվում է հրէաների թաղը։ Հրէաները մօտ 8000 հոգի են, թաթարախօս, ունեն ութը սինագօգա։ Նրանք, ինչպէս ասում է նրանց ռաբբին, գաղթել են այս կողմերը հրէաների առաջին տաճարի կործանումից յետոյ Ասորեստանի Սալմանասար թագաւորի թագաւորութեան օրերով։ Հրէաները պարապում են վաճառականութեամբ, չարչիութեամբ, փայտի արտահանութեամբ, մասամբ և երկրագործութեամբ, Նրանք սեփական հողեր չունեն վար ու ցանքի համար, ուստի վաղուց խնդրում են քաղաքային վարչութեան տալ իրանց քաղաքային ազատ հողերը կապալով 99 տարի ժամանակով, սակայն քաղաքային վարչութիւնը չէր համաձայնվում այդքան երկար ժամանակով տալ։ Փոխարքայի գալու ժամանակ մայիսին նրանց մի պատգամաւորութիւնը գնաց Խաչմաս կայարանը և միջնորդութիւն յարուցեց կոմսի առաջ այս մասին։

Չը նայելով հրէաների պատկառելի թւին, նրանց մէջ չը կայ նոյն իսկ տարրական դպրոց, իսկ պետական երկդասեան դպրոցը հրէաներից յաճախում են միայն երեք հոգի։ Երեխաները մնում են տգէտ խալիֆաների հոգատարութեան տակ։ Աղքատ հրէայ կանայք պարապում են ծառայութեամբ. նրանք օրական 20 կոպ. ամեն կարգի ծառայութիւններն են կատարում իրանց հացով։ Հրէաները բնակված են շատ խիտ, չունեն պարտէզներ և ընդարձակ բակեր, որոնք յատուկ են Ղուբային։

Անցեալները Ղուբայի հայ և Թուրք բնակիչները մի խնդրագիր ուղարկեցին Կովկասի փոխարքային, որով խնդրում են. 1) Եթէ նահանգական հիմնարկութիւնները տեղափոխվելիս լինեն Բագուից, այն դէպքում տեղափոխել նրանց Ղուբա և ոչ Շամախի, որովհետև Ղուբան Շամախու հետ համեմատած մեծ յարմարութիւններ ունի՝ մօտ է երկաթուղու կայարանին 23 վերստով, մինչդեռ Շամախին—80 վ., ենթակայ չէ երկրաշարժին և այլն։ 2) Ճանապարհ շինել Ղուբայից մինչև Վլադիկավկազեան երկաթուղու Խաչմաս կայարանը արքունական հաշւով։ 3) Վերադարձնել քաղաքին 167,000 րուբլին, որպիսի գումարը պարտ է Դերբենդը։ Միխայիլ Նիկօլաեւիչի փոխարքայութեան ժամանակ Ղուբայի և Դերբենդի գաւառներից արտահանվում էր տուրք։ Այդ ժամանակ կարգադրութիւն եղաւ վերցնել իւրաքանչիւր ծխից տարեկան 10 կոպ., որպէս զի ժողոված փողով շինեն Դերբենդում նաւահանգիստ։ Ժողովվել էր 250,000 րուբ., որի $^2/_3$ մասը պատկանում էր Ղուբայի գաւառին—167,000 ր., իսկ մնացածը Դերբենդին։ Նաւահանգիստ չը շինվեց և երկաթուղի անցկացնելուց յետոյ այդ խոշոր գումարը ճանաչվեց Դերբենդի սեփականութիւնը՝ շնորհիւ դերբենդցիների աշխատանքին։ Ղուբեցիները համարում են այդ ապօրինի և պահանջում են վերադարձնել տուրքից ժողոված գումարից իրանց մասը—177,000 րուբ.։ 4) Բանալ քաղաքում քաղաքային չորսդասեան դպրոց։ Ղուբան մօտ 30,000 բնակչով (հրէաներին էլ հաշված), իսկ գաւառը մօտ 200,000 բնակչով, մինչև օրս զուրկ են կանոնաւոր դպրոցից։ 5) Միացնել Ղուբան Շամախու հետ խճուղով Կովկասեան սարերի վրայով։ 6) Բաշխել կամ պակասեցնել պետական և քաղաքային հարկերը տասը տարով։

N. N.

ԴԱՐՁԵԱԼ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ

(Իմ պատասխանը պ. Խաժակին)

VI

Մենք պարզ ու որոշ ցոյց տուինք մեր յօդուածի երկրորդ մասում («Մշակ» №17.), որ մի պետութեան բիւրօկրատիզմի, որպէս վարչական տիրապետող սիստեմի, հիմնական վերացումը բնական անհրաժեշտութեամբ պայմանաւորված է նոյն պետութեան բիւրօկրատիա մատակարարող ու աճեցնող ըէժիմի արմատական յեղաշրջումով։ Մենք ցոյց տուինք այնուհետև, թէ որ աստիճան անհիմն ու նայիւ կարծիք է, պնդել, որ մի պետութեան բիւրօկրատիայի էութիւնը, որակը, գոյութեան յատկանշական գծերը կարելի է փոխել կամ վերացնել լոկ պետութեան անդամահատութեամբ, ապակենտրոնացումով։ Մենք ապացուցեցինք այդ Ռուսաստանի օրինակով, պատկերացնելով մեզ նրան մի անդամահատված դրութեան՝ տերրիտօրիալ-ինքնավարական կամ ֆեդերատիւ հիմքերով, բայց միայն ըէժիմի այն փոփոխութեամբ, ինչ խոստանում է հոկտեմբերի 17-ի մանիֆեստը (եթէ այդ աննշան փոփոխութիւն կարելի է անուանել)։

Սակայն պ. Խաժակը կարող է ասել, որ Ռուսաստանի օրինակը դեռ բաւական չէ իրան համոզելու մեր ապացոյցների ճշմարտութեան մէջ։ Ինչպէս, եթէ այդքան թոյլ է պ. Խաժակի կարողութիւնը (ըմբռնողութեան ոյժ) իրան պարզ պատկերացնելու առանց ձեռք իբրև [illegible] հիմքեր ունեցող քաղաքական կազմը, այն ժամանակ մենք խրախոյս ենք տալիս նրան դեռ չը բաւականանալ մեր ասածներով։

Սակայն պ. Խաժակը չէ կարող չը համոզվել և չը բաւականանալ հետևեալ աչք ծակող օրինակներով։ Նա չունի այլ ևս արդարանալու և փախուստ տալու միջոց ու ճանապարհ։

«Դեռ այսօր էլ—ասում է պ. Խաժակը—Պրուսիան (ամբողջ Գերմանիան, ոչ միայն Պրուսիան.Բ.Ի.) և Աւստրիան կազմում են բիւրօկրատիզմի կլասիկ հայրենիք»։

Շատ հրաշալի. միանգամայն համաձայն ենք, բայց նաև ուրախ, որ դուք ձեզ ծուղակի մէջ ձգելու առիթներ էք տալիս մեզ։

Գերմանիան, որ իր ֆեդերացիայով գեղեցիկ օրինակ էր ծառայեցնում պ. Խաժակը իր առաջին յօդուածում (1905 թ.), երկրորդ յօդուածում, սակայն, մեզ պատասխանելու ժամանակ, նա խուսափում է անունն իսկ յիշատակելու, որովհետև մեր քննադատութեան մէջ («Մուրճ» № 11—12) պ. Խաժակին իր «գեղեցիկ օրինակով» դրել էինք բաւական անախորժ դրութեան մէջ։

Մենք ասել և ասում ենք պ. Խաժակին, որ անդամահատված, ապակենտրոնացած Գերմանիայում բոլոր մեծ թէ փոքր դաշնակիցները ունեն «թունդ» բիւրօկրատիա, այն ևս իւնկերական բիւրօկրատիա, կամ ձեր բառաստեղծական խօսքերով «հիւծախտ» ու «վամպիր» դարձած բիւրօկրատիա։ Մենք նրան շօշափելի օրինակներով ցոյց ենք տալիս, որ [illegible] ունեցող Գերմանիայի ֆեդերատիւ մարմինները, որոնց մեծ մասը «փոքրիկ, խիստ փոքրիկ վայրեր» են (նոյնքան, կամ նոյն իսկ աւելի փոքրիկ, քան մեր կովկասեան նահանգներն են՝ օրինակ. մեծ դքսութիւններ Մեկլենբուրգը, Հեսսենը, Օլդենբուրգը, դքսութիւն Բրաունշվայգը և բազմաթիւ իշխանութիւններ, տարածութեամբ ու բնակիչներով աւելի փոքր են քան մեր Թիֆլիսը, Բագուն, Քութայիսը, Գանձակը և այլն, իբրև զատ-զատ նահանգներ),—ունեն, այնու ամենայնիւ, բիւրօկրատիա՝ իր տիրական-հրամայական և կամայական-կաստայական բնաւորութեամբ։

Այլ ևս ինչ է ուզում պ. Խաժակը։

«Եթէ Պրուսիայում աջողութիւն ունենայ վարչական ապակենտրոնացումը, իւնկերական բիւրօկրատիզմը կը մեղմանայ,—ասում է մեր «քաջ պատմագէտ կրիտիկոսը»—եթէ նոյն իսկ պրուսական սահմանադրութիւնն մնայ նոյն «կիսատ-պռատ», նոյն բուրժուական սահմանադրութիւնը»։

Եթէ պ. Խաժակը ծանօթ լինէր խնդրին և տեղեակ՝ պատմական փաստերին, այն ժամանակ նա այս աստիճան՝ տեղի թէ անտեղի, զօռ չէր տայ իր երեւակայութեան—կասենք մենք։

Այն կէտերում, ուր անհրաժեշտ է յօդուածագրի ինքնուրոյն ու առողջ դատողութիւնը, ինքնուրոյն ու տրամաբանական վճիռները, պ. Խաժակը կուրօրէն ենթարկվում է իր գերագոյն հեղինակութեան, Բրօքհաուզին, իսկ այն դէպքերում, երբ խնդիրը վերաբերում է պատմական իրողութեան, այդտեղ պ. Խաժակը մեզ լեգենդներ է պատմում, ամենևին չյիշատակելով, թէ ինչ է հաղորդում անցեալի ուսումնասիրած աղբիւրը։ Այն դէպքում, ասում ենք, երբ ամենևին կարիք չը կայ երկար ու ձիգ պատմել բիւրօկրատիայի ծագումը, այդտեղ պ. Խաժակը «պինդ բռնած ընթերցողի օձիքը» չարագործում է նրա համբերութիւնը, իսկ այնտեղ, ուր պահանջվում է կարծիք, հիմնված ճշգրիտ տեղեկութեան վրա, պ. Խաժակը մոլորեցնում է ընթերցողին։

Նա չը գիտէ, որ գերմանական յեղափոխութիւնից (1848 թ.) քառորդ դար յետոյ, այսինքն 70-ական թուականներից սկսած, ինքնավարութիւն և վարչական ապակենտրոնացում մուտք է գործել նաև Պրուսիայում, սակայն և այնպէս, պ. Խաժակ, իւնկերական բիւրօկրատիզմը չէ մեղմացել, որովհետև իւնկերական-բուրժուական կիսատ-պռատ սահմանադրութիւնը մնացել է նոյնը։ Հաշտվեցէք, վերջապէս, որ իւնկերական բիւրօկրատիա ծնողն ու սնողը իւնկերական սահմանադրութիւնն է, և որ, հետևապէս, միայն Պրուսիայի իւնկերական-կէսաբսօլիւտիստական ըէժիմի վերացումով է հնարաւոր բիւրօկրատիզմի ոչնչացումը։

Անցնենք Աւստրիային, մի երկրի, որ իր բազմացեղ ու բազմալեզու կազմով շատ է նման մեր երկրին։

Սա ևս մի պետութիւն է, որ բիւրօկրատիզմի կլասիկ հայրենիք է համարվում, և այդ բանի մէջ մազաչափ կասկած չունի մեր պ. քննադատը։ Սակայն ի դժբաղդութիւն ապակենտրոնացման սիրահար մեր քննադատի, տեսնում ենք, որ Աւստրիայի զանազան երկրամասերը՝ Չեխաստան, Գալիցիան, Դալմացիան, Զալցբուրգ, Տիրօլ, ապա Կրօատիան և Սլաւօնիան (Ունգարիայում) և այլն,—ինքնավարութիւնը՝ իրանց սեփական տերրիտօրիալ-լանտագներով, այնու ամենայնիւ չէ փրկում ժողովրդին տիրական-կամայական բիւրօկրատիայից, նրա «հիւծախտ» ազդեցութիւնից։

Ինչո՞ւ ենք շատ հեռու գնում։ Վերցնենք հէնց ինքը Ռուսաստանը ռաֆինէս (ապականված) չինովնիկութեան, par excelence բիւրօկրատիայի կլասիկ հայրենիքը, իր ներկայ դրութեամբ։ Ի՞նչ արժէք ունեն և որ չափով հնարաւորութիւն է տրված ազդելու տեղական բիւրօկրատիայի վրա զեմստվօները և քաղաքային խորհուրդները—այսպէս անուանված տեղական ինքնավար մարմինները։ Սրանք ոչ միայն զուրկ են ոյժ ու ազդեցութիւնից «թուլացնելու» կամ «մեղմացնելու», գէթ շատ համեստ չափով, տեղական բիւրօկրատիայի գոռ ոյժը, նոյն իսկ նրա ստորակարգ խաւերում, այլ և կատարեալ խաղալիք են նրա ձեռքին և կաշկանդված իրանց վերապահված աւտօնօմ շրջանի մէջ։ Զեմստվօներն ու քաղաքային խորհուրդները կատարելապէս կախեալ վիճակի մէջ են գտնվում նահանգապետներից (և ներքին գործերի մինիստրից), և նոյն իսկ զուրկ են ինքնակամ ընտրելու իրանց զանազան պաշտօնեաներին (բժիշկներ, վիճակագրողներ, ճարտարապետներ և այլն)։

Ո՞ւր հասցրեց մեզ փաստերի այս անվերջ տարափը, ընթերցող, լոկ համոզելու համար այն տարրական ճշմարտութեան մէջ, որ մի երկրի բիւրօկրատական սիստեմ ոչ թէ կախված է քաղաքական միջնավայրի լայնածաւալ և փոքրածաւալ դիրքից, այլ քաղաքական կազմից, տիրապետող ըէժիմից։ Եթէ վերջինս միահեծան կամ կէսմիահեծան-սահմանադրական է, ապա նա պիտի ունենայ ամենայն անհրաժեշտութեամբ բիւրօկրատական սիստեմ իր վարչական մեխանիզմի մէջ, թող նոյն իսկ քաղաքական միջնավայրը այնքան փոքր լինի, որքան Անդրկովկասն է։ Եւ ընդհակառակը. եթէ քաղաքական կազմը խիստ պարլամենտարիստական-դեմօկրատիական է, (օրինակ այն աստիճան, ինչ պահանջում է սօցիալ-դեմօկրատների մինիմալ ծրագիրը), ապա նա բոլոր դէպքերումն էլ զուրկ կը լինի բիւրօկրատիզմից, թող նոյն իսկ քաղաքական միջնավայրը այնքան մեծ լինի, որքան Ռուսաստանն է։

«Այսպէս ուրեմն—ասում է պ. Խաժակը, րէզիւմէ անելով—պատմական զարգացման ու պատմական փաստերի ուղիով մենք կրկին հասանք մեր ելակէտին՝ կենտրոնացում և բիւրօկրատիա, բիւրօկրատիա և կենտրոնացում իրարից բաժանել անկարելի է»։

Այսպէս ուրեմն—կասենք մենք դրա դէմ, մեր բերած բոլոր փաստերի և կենդանի օրինակների հիման վրա—պատմական-իրական փաստերի ուղիով և տեսական լուսաբանութեամբ մենք կրկին հասանք մեր այն քննադատական վճռին, որ պ. Խաժակի առաջադրած վերոյիշեալ թեզիսը ոչ միայն ճիշտ չէ, այլ և մի մեխանիքական, բանալ դատողութիւն է, մի կատարեալ տերմինօլօգիական բարբարիզմ է։

Պ. Խաժակի մեխանիքական թեզիսի հանդէպ մենք դնում ենք մեր օրգանական թեզիսը՝ դեմօկրատիզմ եւ բիւրօկրատիզմ, բիւրօկրատիզմ եւ դեմօկրատիզմ—դրանք միմեանց հետ հաշտվել ու համակերպվել չեն կարող։

Իսկ այդ թեզիսի լուսաբանված հիմնաւորումը մենք կը տեսնենք մեր յօդուածի յաջորդ մասերում։

Բ. Իշխանեան

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Յունվարի 18-ին

Այսօր պատահմամբ ձեռքս ընկաւ մեր քաղաքում հրատարակվող «Карсъ» պաշտօնական լրագրի № 2-ը, որի էջերում մեծ զարմացմամբ կարդացի պարսիկ Բէքրալայ-Թաղի-Ալիօղլիի կալուածի վրա յարձակվում գործելու և դռներն ու լուսամուտները կոտրատելու մասին. զարմացմամբ կարդացի, որովհետև այդ պաշտօնական օրգանը չը կամենալով ի լուր աշխարհի յայտնել, որ «Թուրքերն էլ ընդունակ են աւազակութեան, սպանութեան, աւարառութեան և այլն շատ ընտիր-ընտիր կարողութիւնների, ընդունակութիւնների, քաջագործութիւնների», բաւականացել է միայն յիշատակելով թէ՝ այս ինչ օրը 5 անյայտ դիմակաւորված չարագործներ, յարձակվում են Բէքրալայ-Թաղու տան վրա և վերջը աւելացնում է, որ այդ հինգ անյայտ չարագործներից 3-ը կալանաւորված են և այժմ գտնվում են բանտում։

Այժմ, ընթերցող, ինչ կը հասկանայ հեռաւոր, միամիտ և գործից բոլորովին անտեղեակ օտարազգի ընթերցողը «Карсъ»-ի այդ լուրից։ Այն,—կը պատասխանենք նրա տեղ—քանի որ ներկայ Թուրք-հայկական քաոսի կռուի ժամանակ չի թոյլ տայ Թուրքը կամ պարսիկը իր արիւնակցի տունը թալանելու, աւերելու փոխանակ իր կեանքով, արեան գնով պաշտպանելու նրան, հետևաբար, «Карсъ»-ի հաղորդած փաստ և միանգամայն հեռաւոր ընթերցողների համար մութը տեղեկութիւնից կը գայ այն ակամայ եզրակացութեան, աւելի ճիշտ՝ ենթադրութեան, որ անյայտ չարագործները անպատճառ եղած կը լինեն հայերը... Այսպէս ինչպէս կը կարծէ ընթերցողը, չէ՞ որ երբ մի անմեղ կամ նոյն իսկ մի չնչին բանում մեղադրվող հայ է բռնվում, իսկոյն և եթ արձանագրում է այդ թերթը նրա անուն-ազգանունը ի լուր աշխարհի թէ՝ «տեսէք, տեսէք, հայերը ինչե՜ր են անում... ինչ տեսակ բարբարոսութիւններ են կատարում»...

Խորհուրդ կը տայինք այդ թերթի պ. խմբագրին մի քիչ բարեխղճութիւն ունենալ և մեր քաղաքում տեղի ունեցող դէպքերը իրանց իսկութեամբ արձանագրել իր թերթում և ոչ թէ այլանդակված, յօշոտված և կասկածներ յարուցանող ձևերով ու ակնարկներով...

Տեղացի

ՆԱՄԱԿ ՆԻԿՕԼՍԿ-ՈՒՍՈՒՐԻՅՍԿԻՑ

(Պրիմօրսկի շրջան), նոյեմբերի 14-ին

Վլադիվօստոկի խառնակչութիւնները մի քանի օր տևեցին. քաղաքը մեծ վնասներ կրեց. եղան մարդկային մեծ զոհեր... Նիւթական մեծ վնասները հասնում են մի քանի միլիոնների. կէս միլիոնից աւելի վնաս է կրել Կունստ-Ալբերս ֆիրման, իսկ միւս վնասները դեռ որոշված չեն։ Մարդկային զոհերը բացի նաւաստիներից, զինուորներից, որոնց թիւը հազար հինգ հարիւրից անցնում է, եղել են մեծ քանակութեամբ չինացիներից...

Չեն վնասվել միայն կորէացիները. դրանց թաղը քաղաքից համարեա մի վերստ հեռու է. երբ խառնակիչները քաղաքը կողոպտել և այրելուց յետոյ գնացել են կորէացիների թաղը կողոպտելու, այնտեղ հանդիպել են ընդդիմադրութեան։ Կորէացիները արդէն պատրաստված հանդիպել են նրանց հրացանների մի քանի զալպերով և այսպէս կողոպտիչները մի քանի զոհեր տալով, առանց մի բանից օգտվելու, հեռացել են. միայն մի տուն է այրվել։

Պատմում են, որպէս թէ եապօնացիներին են պարտական կորէացիները, որ ազատվեցին կողոպտվելուց։ Հէնց այդ օրերը մի քանի եապօնացիներ եկել են Վլադիվօստոկ և բնակվել կորէացիների մօտ. երբ սկսվել է կոտորածը և կողոպուտը, եապօնացիները այդ բոլորը աչքի առաջ ունենալով՝ անմիջապէս բոլոր կորէացիներին ոտի են կանգնեցրել ինքնապաշտպանութեան համար և այդպիսով, ի պատիւ եապօնացիների, անվնաս մնացին թէ իրանք կորէացիները և թէ իրանց գոյքը։ Ահա թէ ինչ է նշանակում ինքնապաշտպանութիւնը... Չը լինէին եապօնացիները (6—7 հոգի), կորէացիների ամբողջ թաղը կը կողոպտվէր և կայրվէին մի քանի հարիւր տներ և ահագին էլ մարդկային զոհեր կը տային...

Մտքերը դեռ չեն խաղաղվել... Այսօր Վլադիվօստոկում մի օֆիցեր մի զինուորից պահանջում է զինուորական պատիւ (զինուորը գերութիւնից նոր վերադարձած է եղել), իսկ վերջինս չէ կատարում օֆիցերի պահանջը. օֆիցերը սրի մի հարուածով զինուորի գլուխը կտրում է... Հետևանքը լինում է այն, որ սպանվում է ինքը և մի ուրիշ օֆիցեր և երեք հոգի էլ մահացու վէրք են ստանում, դարձեալ օֆիցէրներ և մի և նոյն ժամանակ օֆիցէրական սօբրանիէն բոլորովին ոչնչացնում են։ Սպասւում են նոր խառնակութիւններ… դարձեալ ի պատիւ բիւրօկրատիայի…

Ս. Բուդաղեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս, յունվարի 25-ին

Թոյլ տուէք երկտող զետեղելու «Մշակ»-ի առաջիկայ համարներից մէկում։

Կարդացի «Մշակ»-ի № 12-ում պ. Ս. Մարգարի Զաքաթալայից գրած նամակը, որով պ. Մ-ը խիստ դատապարտում է Զաքաթալայի ժողովրդին երկու բանակի բաժանվելու համար, ինչ որ քահանայական հարցի առիթով։

Բայց երևի պ. Մ-ը ճիշտ չէ ըմբռնել այն սկզբնապատճառները, որոնք առիթ են տուել զաքաթալցիներին երկու բանակի բաժանվելու կամ երևի պ. Մ-ը մոռացել է նաև իր կատարած անճոռնի դերը այդ խնդրում։

Պէտք է սակայն, որ քահանայական հարցը չէ, որ այդքան գրգռել ու երկու բանակի է բաժանում զաքաթալցիներին, այլ այն, որ տեղիս ողջամիտ հասարակութեան մի մասը, գլուխ ունենալով երիտասարդութիւնը, չէ ցանկանում, որ տեղական հասարակական գործերի ղեկավար հանդիսանան մի խումբ պահպանողական չարչիներ։ Ահա դրանք են տեղիս երկու բանակները, մի կողմից հասարակական գործունէութեան ծարաւ երիտասարդութիւնը և միւս կողմից ժողովրդի գլխին ինքնակոչ ղեկավար հանդիսացած չարչի-վաճառականութիւնը։

Եւ պէտք է սակայն, որ հէնց ինքը պ. Մ-ը եռանդուն մասնակցութիւն ունենալով երկպառակութիւնների մէջ, չէ վլացել իր կողմնապահ պաշտպանութիւնը ցոյց տալ ռէակցիոներ բանակին Զաքաթալայում, որի համար և ունեմ լիառատ փաստեր։

Չէ կարելի արդեօք, որ պ. Մ-ը «Մշակ»-ի էջերում Զաքաթալայի ժողովրդին տուած իր հոգեշահ խրատներից, մի քիչ էլ ինքը խրացնէր և չառաջնորդվէր խնամիական օրէնքներով ու անձնական հաշիւներով։

Կ. Ասծատուրեան

II

Թիֆլիս, յունվարի 26-ին

Ի նկատի ունենալով ներկայ անապահով դրութիւնը, Թեմիս բարձր սրբազան առաջնորդը կարգադրեց ս. Սարգսի մասունքը այսօրվանից փոխադրել Վանքի աւագ եկեղեցին։ Ուրբաթ երեկոյեան, ամսիս 27-ին կը կատարվի հանդիսաւոր ժամերգութիւն և 28-ին, շաբաթ, տօնի օրը՝ ս. պատարագ։ Ս. մասունքը բացմացրած կը մնայ ուրբաթ երեկոյեանից մինչև երկուշաբթի։ Խնդրեմ տօնի վերաբերութեամբ կարգադրութիւնը տպագրել բարեհաճէք ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդի։

Ընդունեցէք և այլն. վանահայր ս. Սարգիս վանքի՝ Եփրեմ վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, յունվարի 26-ին երեկոյեան Տէատրալնի պերէուլօկ կոչված փողոցում՝ «Լէվադի» հիւրանոցի մօտ ատրճանակի երկու հարուածով սպանվեց օկոլօդօչնի Մուրադօվ։ Զօրքը խիստ շրջապատեց սպանութեան տեղը։ Մի քանի ժամանակից յետոյ կրակ երևաց մերձակայ շինութեան մէջ։ Հրդեհը հանգցնելու համար շտապեցին այդտեղ հրդեհաշէջները։ Իսկոյն կանգ առաւ էլէքտրաքարշի երթևեկութիւնը։

—

Չորեքշաբթի, յունվարի 25-ին, գիշերվայ ժամի 2½-ին, իշխան Վօրօնցօվի արձանի դիմաց գտնվող «Ցենտրալնի» կահաւորված համարներ-հիւրանոցը ենթարկվեց հրացանաձգութեան պահակապինուորների և օրապահ ոստիկանների կողմից և քիչ մնաց, որ նա ենթարկվէր նոյն ամբակոծութեան, որին ենթարկվեց Սօլդատսկի-բազարի շինութիւնը դեկտեմբերի 22-ին։ Այդ հրացանաձգութեան բուն պատճառները որոշ կերպով լուսաբանված չեն դեռ ևս. այսքանս յայտնի է, որ այդ օրը, գիշերվայ ժամի 1-ին, եկան յիշեալ հիւրանոցը մի ռուս զինուոր և մի ջահել վրացի և բռնել տալով հիւրանոցի 31-դ համարը, ուզեցան գիշերել։ Կառավարիչը պահանջեց անցաթուղթ, սակայն զինուորը մերժելով պատասխանել է, որ ինքը իրաւունք ունի ամէն տեղ քնելու առանց որ և է դօկումենտի։ Մի ժամից յետոյ, երբ այդ երկու հիւրերի մէջ կռիւ է ծագել և մէկը դրանցից ատրճանակ է արձակել փողոցի կողմը և սա պատճառ է դարձել՝ պահակապինուորների և ոստիկանների հրացանաձգութեան։ Մարդկային ոչ մի զոհ չը կայ, միայն հիւրանոցի պատուհանները կոտրված են գնդակների տարափից։ Այնուհետև թափվել են հիւրանոցի ներսը ոստիկաններ և կօզակներ և խուզարկութիւն են կատարել, բայց ասում են ոչինչ չեն գտել։ Թէ զինուորը և թէ նրա հետ եկած հիւրը—ձերբակալված են և տրված կօմենդանտի վարչութիւնը։ Միւս վերսիան այս է. երբ այդ հիւրանոցում տեսնում են մի ուսանողի, որ խուզարկման ժամանակ արագութեամբ դուրս է գալիս հիւրանոցից ու հեռանում է և երբ խառնակութիւն և ընդհարում առաջացնելու մտքով—վերջինս է ատրճանակ արձակել։ Այս գործի համար տարվել է կօմենդանտի վարչութիւնը այդ հիւրանոցում բնակվող մի ռուս օֆիցէր՝ որը ականատես է եղել այդ անցքերին և որ իր ցուցմունքը պիտի տայ դրա վերաբերմամբ։ Շատ հետաքրքրական է իմանալ մի բազմակողմանի անաչառ քննութեան հետևանքը, քանի որ անցքը մի տեսակ քօղով է ծածկված։

—

Մեր հաւաքած տեղեկութիւններից պարզվում է, որ ընդհանուր տրտունջները հացի թանգութեան դէմ միանգամայն արդարացի են։ Արդէն մէկ շաբաթից աւել է, որ հարիւրաւոր վագօններով Ռուսաստանից ալիւր է ներս մուծվում մեր քաղաքը, բացի այդ, հացթուխները ալիւրի տեսակների հետ մեծ քանակութեամբ սիմինդրի ալիւր են խառնում, որի պուդը 90 կ. թանգ չէ, բայց չը նայելով դրան, շարունակում են նրանք բարձր գնով վաճառել հացը՝ շնորհիւ անտէրութեան։ Այսպէս, օրինակ՝ ֆունտը 5 կոպ. վաճառվող հացը՝ համարձակ կարող են նրանք 3½ կ. ծախել, ինչպէս այդ առաջ էր, սակայն միանգամ սովորեցնելով սպառողներին իրանց գներին, մշտական իրանց համար օրէնք են շինել այդ և բողոքների դէմ էլ յայտնում են, որ սակագին նշանակելուն են սպասում քաղաքային վարչութեան կողմից։ Ահա թէ ինչով են իրանց արդարացնում։ Նոյն չափազանց գները տիրում են և շաքարի վերաբերութեամբ, չը նայելով որ Փօթից մեծ քանակութեամբ շաքար և այլ կօլօնիալ ապրանքներ են ստացված քաղաքումս և շարունակ ստացվում են ամեն օր։ Ջենհոս և տեղական վաճառականները պնդում են, որ շաքարը այժմ պուդը 6 ր. 50 կ. աւել չը պէտք է լինի, սակայն 7 ր. 70 կ. են վաճառում ծախողները և գները կանոնաւորելու մի յատուկ մարմին՝ ոչ քաղաքային վարչութեան կողմից և ոչ էլ առևտրի և արդիւնաբերութեան կօմիտէի կողմից չկայ, որ միջամտէր գործին, ուստի ժողովրդի շահերը միանգամայն բարձի թողի են արված և շահաէջների կամայականութեանն են մատնված։

—

Պարսկական ընդհանուր հիւպատոսարանը խնդրում է մեզ հաղորդել, որ Թիֆլիս եկաւ պարսից կառավարութիւնից նշանակված Կովկասի պարսկական ընդհանուր հիւպատոս Միրզա-Իսմայիլ-խանը և մտաւ իր պաշտօնավարութեան մէջ։

—

Պարսկական ընդհանուր հիւպատոսի կովկասեան պաշտօնակատար գեներալ Արիօղլ-խան-Ֆերիդ-օս-Սուլթանը, իր կառավարութեան կարգադրութեան համաձայն, մեկնում է այստեղից Կովկասում գտնվող՝ Բաքուի, Բաթումի, Երևանի, Գանձակի, Վլադիկավկազի ու Ղարսի պարսկական հիւպատոսարանները։

—

«Нар. Хоз.» թերթի մէջ տպված է հետևեալ հեռագիրը՝ «Բաքու, յունվարի 17. «Նով. Վր.» թերթում յունվարի 14-ին լոյս տեսաւ մի հեռագիր, երբ թէ Բաքուի հասարակութեան ներկայացուցիչ Հաջի Մէջիդօվ—Ալէքպերօվի ստորագրութեամբ, այն մասին թէ Բաքուի թուրք հասարակութեան ներկայացուցիչները համառուսական մահմեդականների ժողովում, Ախունդօվ, Թօփչիբաշեվ, Ասատուլլայեվ, Կարաբէկօվ և Սադըղօվ ինքնակոչներ են և ոչ ոքից լիազօրութիւն չունեն։ Մենք, ներքևում ստորագրող բաքուեցի թուրքերս, սաստիկ վրդովված ենք այդ անկյալ կեղծ պրովօկատօրական ստորագրութեամբ հեռագրով, որը, երևի, ուղղված է մեր պատգամաւորներին վարկաբեկ անելու նպատակով. վճռական կերպով յայտնում ենք, որ, նախ՝ մենք Բաքւում Հաջի Մէջիդօվ-Ալէքպերօվ անունով ոչ ոքի չենք ճանաչում, երկրորդ՝ մեր պատգամաւորները լիազօրութիւն ստանալով ժողովին մասնակցելու, ուր պէտք է քննվէին մահմեդականների կարիքները, ճանապարհվեցին Բաքուի մահմեդական հասարակութեան առաջաւոր տարրերի գիտութեամբ և համաձայնութեամբ։ Կօմմերցիայի խորհրդական Հաջի-Զէյնալ-Աբդուլ Թաղիեվ, քաղաքագլուխ Բէահիլ-բէգ-Սաֆար-Ալիեվ, վարչութեան անդամ Գաջինսկի, վարչութեան ձայնաւորներ՝ Իսմայիլ-բէկ Սաֆարալիեվ Սադըղ, Թաղիեվ, Հաջիեվ, Իսրաֆիլ, Հաջի-Մուստաֆա, Րասուլօվ-Հաջի, Ասլան Աշուրօվ, Հասան-աղա Հասանօվ, Ասադուլլա Ահմեդօվ, Հաջի-Ինուս, Նաղըևօվ Հաջիբաբա, Աշուրօվ Իսաբէգ, Գաջինսկի-Մախմուտբէգօվ, բժիշկներ՝ Վէքիլօվ, Աղայեվ, Ախունդօվ, Սալիխբէգօվ, «Իրշադ» խմբագիր Աղայեվ, «Հէյաթ» խմբագիր Հուսէյնզադէ, «Կասպի» խմբագիր Մէլիքօվ, կալուածատէրներ՝ Ասադբէկ Սէլիմխանօվ, Ալիղուլի-բէգ Սանլարօվ, Իսաբէկ Ամիրբէկօվ, Ալիբէկ Ամուրտակօվ, նաւթարդիւնաբերողներ՝ Մուխթարօվ, Միրզա Ասադուլլաեվ, Նաջաֆ Ամիր-Ասլանօվ և շատ ուրիշները»։

—

Ներկայ տարին լրագրութեան համար միակ հալածանքի տարի է պատկերանում։ Յունվարի 15-ին Մոսկվայի և նրա շրջակայ վօկզալներում յարձակում են գործած ժանդարմային ոստիկանութեան ձեռքով լրագրավաճառներից հետևեալ թերթերը՝ «Сигналы», «Стрѣлы», «Клювъ», «Забіяка», «Зритель», «Нагайка», «Жупель», «Буреломъ», «Злой Духъ», «Митингъ», «Вампиръ», «Сѣкира», «Гвоздь», «Полярная Звѣзда», «Молодая Россія» և սրանց հետ ի միասին այն երգիծաբանական թերթերը, որոնց մէջ Մոսկվայի վերջին անցքերի կարրիկատուրաներն են նկարած վարչական բարձրաստիճան անձանց դէմ։

—

Յունվարի 16-ին, Պետերբուրգի Պօկրօվսկի իգական գիմնազիօնում պարապմունքները սկսելուց առաջ, սովորութեան համաձայն պէտք է երգէին աղօթքը, բայց հաւաքված աշակերտուհիները չէին ուզում երգել, չը նայելով տեսչուհու բազմաթիւ խնդրանքին։ Իսկ երբ տեսչուհին հրամայեց նրանց սկսել երգելը, այն ժամանակ քառաձայն խումբը փոխանակ աղօթքի երգեց մարսէլեզը։ Դրանից յետոյ,—կարդում ենք «Нов. Вр.» թերթում,—6, 7 և 8-րդ դասարանի աշակերտուհիները անմիջապէս հեռացվեցին գիմնազիօնից։

—

Արտեմ Քալանթարովը միջնորդութիւն է յարուցել Կովկասեան Փոխարքայի առաջ թոյլատրելու իրան Թիֆլիսում հրատարակել իր խմբագրութեամբ ամենօրեայ ռուսերէն մի թերթ «Кавказскій Курьеръ» անունով։

—

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ, Բաքւում հրատարակվող «Бакинск. Жизнь» լրագիրը փակվել է իր ծայրայեղ ուղղութեան համար։

—

«Веч. Гол.» լրագրի խօսքով, յամառ լուրեր են պտտում, որ շուտով գեներալ Տրէպօվ մեծ պաշտօն է ստանալու։ Ասում են, որ նա Կովկասի Փոխարքայ կը նշանակվի կամ պրիվիսլեան երկրի գեներալ-նահանգապետ։

—

Հրէական ժողովրդի իրաւունքների հաւասարութեան դաշնակցութիւնը դիմեց Ներքին գործերի մինիստրին և միջնորդեց, որ թոյլատրվի հրէական համաժողով գումարել Պետերբուրգում յունվարի վերջը։ Մինիստրը մերժեց այդ միջնորդութիւնը։

—

Ներքին գործերի մինիստրը մերժեց Լեհաստանի լեհերի միջնորդութիւնը համաժողով գումարել փետրվարին Վարշավայում։

—

«Միահեծան ինքնակալութեան կուսակցութիւնը» ի նկատի ունենալով Պետական Դումայի համար առաջիկայ ընտրութիւնները՝ ինքնակալութեան մոլեռանդ պաշտպան «Մոսկ. Վեդ.»-ի մէջ կոչեր է հրատարակում յանուն ռուս մարդկանց, որոնց խորհուրդ է տալիս՝ հեռու պահել իրանց սատարմից «ինտելլիգենցիայից» և նրա քարոզած խորթ և անյուսալի ուղղութիւնից։ Առանձնապէս նա մատնանիշ է անում «հոկտեմբերի 17-ի Դաշնակցութեան» և նորերս կազմակերպած «Առևտրական-արդիւնաբերական» միութեան վրա, համարելով դրանց առանձնապէս վտանգաւոր կուսակցութիւններ, որոնք ձգտում են փաթաթել Ռուսաստանի վզին «սահմանադրական հասարակութիւն» կամ արևմուտքում խայտառակված «պարլամենտական եղանակ», որը պիտի կաշկանդէ ցարի իշխանութեան ձեռքը և ոտքը և հետևաբար պիտի ճնշէ ու խեղդէ այն ամենը՝ ինչ որ ռուսական է։ Այդ «կուսակցութիւնը» մի և նոյն ժամանակ իր կոչի մէջ յայտարարում է, որ հակամիապետական ձևի կառավարութեան առաջարկողները զանազան օտար երկրացիք են և մեր կատաղի թշնամիները, մանաւանդ սրանցից՝ հրէաները (խեղճ հրէաներ), որոնք (իբր) տարածեցին Ռուսաստանում «կրամօլան» և ուզում են սահմանադրական եղանակ մացնելով տիրապետել Ռուսաստանին և նրա կենսական հիւթերը ծծել (sic)։ Կոչը վերջանում է հետևեալ գոհարով՝ «Ով ինքնակալ ցարի կողմն է՝ նա իսկական ռուս մարդ է և նրա համար տեղ կայ Դումայում, իսկ ով հակառակ է ցարի ինքնակալութեան նա դաւաճան է Թագաւորին և հայրենիքին և նրան չը պէտք է ընտրել Դումայի անդամ»։ Այդ կոչի կողքին (№ 14) մի խումբ Մոսկվայի ընտրողների, որոնք իրանց՝ քաղաքական կուսակցութիւններին չը պատկանող են համարում—հրատարակել են յանուն ընտրողների մի կոչ, որի մէջ խորհուրդ են տալիս չը հաւատալ «[illegible]-самовлюбленнымъ» (կօնստիտ.-դէմօկ.) ծուղրուղուներին, քանի որ նրանք կարող են մեծամասնութիւն կազմել Դումայում և այդպիսով փոխանակ նորոգելու և ստեղծագործելու—կը զբաղվին յամառ պայքարով ընդդէմ ցարի իշխանութեան, որի համար նրանք Պետերբուրգի վերջին համաժողովում որոշում են կայացրել։ «Առևտրական-արդիւնաբերողների» կուսակցութիւնը ևս իր կողմից, «հոկ. 17-ի Դաշնակցութեան» պէս, հրատարակում է ընտրողական մանիֆեստներ՝ հակաճառելով միապետականներին։ Հիմնվելով Թագաւորի դեկ. 1-ի արտասանած խօսքերի վրա, այդ «կուսակցութիւնը» պնդում է և հաւաստացնում է, որ ճիշտ և անշեղ կատարողը ցարի կամքի—ինքն է և որ ընդհակառակն՝ բոլոր «միապետական» կուսակցութիւնները սօցիալ-յեղափոխականների հետ ի միասին—Թագաւորի կամքի հակառակորդներն են։

—

Թիֆլիսի Միխայլովսկի երկաթուղու տեխնիքական դպրոցում, ինչպէս յայտնի է, պարապմունքները ընդհատված են շնորհիւ 5 աշակերտների արձակման։ Դրանից յետոյ նորից արձակեցին 11 աշակերտներ, բայց ուսումը դարձեալ չէ վերսկսվել մինչև այժմ։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կրթական բաժանմունքը առաջարկեց յիշեալ դպրոցի վարչութեանը արձակել բոլոր աշակերտ-ագիտատօրներին, իսկ եթէ դրանից յետոյ էլ աշակերտները չեն յաճախիլ դասերին, այն ժամանակ փակել դըպրոցը։ Աչքի առաջ ունենալով այդ բանը, ուսումնարանի վարչութիւնը հրաւիրել է աշակերտների ծնողներին խորհրդածութեան, շաբաթ օրը, ժամի 12-ին։

—

Ռուսական հեռագրական գործակալութեան միջոցով «Кавказъ» թերթը հաղորդում է, որ Բաքւում յունվարի 22-ին խոպերների գնդի եօթ կազակներ մորթել են խէնջալներով քաղաքապահ Սարոկինին։ Յանցաւորները յանձնված են զինուորական դատարանին։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Տարօրինակ գործի ականատես եղանք յունվարի 17-ին կայացած քաղաքային իրաւասուների նիստում։ Քաղաքը ունի սեփական շինութիւն, որի տարեկան վարձն արժէ մօտ 1,500 րուբլի, սակայն զիջում է քաղաքային դպրոցին 600 րուբլով։ Սեպտեմբերին մեր դուման որոշել էր տալ այդ շինութիւնը քաղաքային դպրոցին տարեկան հազար րուբլի վարձով և դատարկել տալ քաղաքային դպրոցի տեսչին այդ շինութեան մէջ գրաւած չորս սենեակը, ուր և տեղափոխել քաղաքային վարչութիւնը։ Ժողովրդական դպրոցների դիրեկտորը չէր համաձայնվել այդ վճռին և յայտնել էր որ, իրանք իրաւունք ունեն կապած պայմանի համաձայն մնալ դպրոցում։ Եւ ահա բացվեց ժողովում տարօրինակ գործ։ Պարզվեց երևաց, որ հանգուցեալ քաղաքագլուխ Նիկ. Ամիրխանով կապել էր դպրոցական վարչութեան հետ այնպիսի պայման, որի զօրութեամբ վերջինս իրաւունք ունի մնալ այդ դպրոցում մշտական 600 րուբ. և քաղաքը իրաւունք չունի մերժել, ոչ աւելացնել և ոչ դատարկել տալ շինութիւնը, միայն եթէ Սղնախում բացվի միջնակարգ դպրոց, այն ժամանակ վերոյիշեալ շինութիւնն անցնում է քաղաքին։ Քաղաքագլուխ Ենիկոլոփեան ցոյց տուեց օրէնքներ, որոնց զօրութեամբ դուման կարող է քանդել նախկին դումայի վճիռը, ուստի առաջարկեց այս տարի էլ վերանորոգել պայմանը, իսկ միւս տարի ոչ։ Այդ ընդունվեց։ Յանցաւորական պայման կապել՝ ճիշտ որ մաղալու բան է…

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Յունվարի 25-ին, ցերեկվայ ժամը 2-ին, 1-ին քաղաքամասի ոստիկանատուն մտաւ այրի Ցաղարեյին և յայտնեց, որ յունվարի 24-ին, երեկոյեան 7 ժամին 3 անյայտ անձնաւորութիւններ մտել են նրա բնակարանը և մահվան սպառնալիքով, հանել են նրա գրպանից 700 րուբլի և կամօդից 2300 րուբ. և անյայտացել։ Այրի Ցաղարեյին և իր աղախին Նի. Զարաւրին չարագործներին չեն կարողացել ճանաչել։

—

Յունվարի 25-ին 4-րդ քաղաքամասի գօրօդօվոյը տարել ոստիկանատուն մի տղայ մանուկ, մօտ 3 օրական, այդ մանուկին գտել է Գանօվսկի փող. վրա, Դուրգեևօվի տան մօտ։ Մանուկն ուղարկված է Օլգինսկի մանկավարժական ինստիտուտը։

—

Յունվարի լոյս 26-ի գիշերը, մօտ ժամը 3-ին, անյայտ չարագործները կոտրելով Անդրանիկ Մամիկոնեանի մանրավաճառի խանութը, որը գտնվում է Գիգուրէ, Գիգլանի փող., Տարօբշեինսկի տանը, տարել են մօտ 160 րուբլու ապրանք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒԼԳԱՐԱՀԱՅ ԴԱՂՈՒԹԸ

VIII

Խօսենք այժմ բուլղարահայ մամուլի մասին։ Դա մեզ համար այնքան ալ հաճելի չէ թէև, որովհետև չունինք ըսելու մխիթարական որ և է բան, բայց երևոյթ է, որու աչքի արժէ վայրկեան մը կանգնել։

Մամուլի պարտականութիւնն է ժողովրդին տալ մտաւոր սնունդ, բացատրել անոր կեանքի երևոյթները, առաջնորդել զայն ժամանակի բարձրութիւններուն վրա։ Այս ամենը հասարակութեան մը մէջ յաջող կերպով ի կատար ածելու համար պէտք է մտաւորական դաս, պէտք է ինտելիգենցիա։—Բուլղարահայ գաղութը զուրկ է մինչ այդ ույժերէն, ուստի մամուլը այնտեղ չէր կարող զարգանալ և իր վրա վերցնել այդպէս բարձր պարտականութիւններ։

1895—96-ի գաղթականութենէն յետոյ երկար ժամանակ արտասահմանի մէջ ամէն շաբաթ, ամէն ա'իս նոր նոր հայ թերթեր կը բուսնէին ինչպէս սունկը անտառի մէջ։ Ի հարկէ այդպիսի թերթերուն կեանքն ալ սունկի չափ երկար կըլլար։ Համոզը թերթ մը կը հրատարակէր։ Նոյն իսկ այս մասին անեկդոտ մը կը պատմուի։—Արևմտահայ հայ մը Պարիզ յայտնի հայասէր Պիեր Քիյարին դիմելով, կը խնդրէ, որ իրեն գործ մը գտնէ։—Այս առթիւ տեղի կունենայ հետևեալ խօսակցութիւնը։

—Ձեր անունը ի՞նչ է, դուք ի՞նչ թերթ կը հրատարակէք։

—Պարոն, ես արևմտահայ եմ, ես թերթ չեմ հրատարակեր։

—Հայ էք և թերթ չէ՞ք հրատարակեր։

Անեկդոտի ձևը կամ ճիշտ ըլլալը չենք գիտեր, բայց մենք այն գիտենք, որ «թերթ հրատարակելու ցաւը» ընդհանուր էր և վարակիչ։ Անգլիայէն բռնած մինչև Բուլղարիա, ասկէ մինչև Եգիպտոս, Ամերիկա ողողուեցան հայերէն թերթերով։—Երբ Թիֆլիսի մէջ թերթի անունն կը փոխէին, յարգելի խմբագիրները, գուցէ չէին գիտեր թէ «Արշալոյս» անունով թերթ մը արդէն կը հրատարակուէր Գահիրէի մէջ «Վերջալոյսի» դժգոհութեամբ։ Թուենք միայն Բուլղարիայի մէջ հրատարակուած թերթերու ցանկը, որքան որ մեր յիշողութիւնը մեզ օգնէ—«Տաւրոս», «Շաւիղ», «Հայկել», «Կարոտ», «Զէյթուն», «Հայաթերթ», «Վերածնութիւն», «Ապագայ», «Վիպաթերթ», «Շարժում», «Իրաւունք» և այլն։

Ասոնցմէ շատեր կրած են շատ հոգեփոխութիւններ, ոմանք եղած են, ոմանք ընկած, ոմանք մնացած, իսկ այժմ հրապարակի վրա կը գտնուին «Շարժում» և «Իրաւունք» անունով թերթերը, երկուքն ալ մէկ մէկ ծաղիկ, որպան անձնական հաշիւներու, փողոցային հայհոյութիւններու, անսանձ կիրքերու, երկուքն ալ կիսակիրթ մարդկանց ձեռքը, երկուքն ալ անմիտ, անհամ, անամէջ ու դատարկ։

Ասոնցմէ առաջինը «Շարժում», գոնէ լաւ կրնար ըլլալ, շատ մարդիկ թէ նիւթական և թէ բարոյական աջակցութիւն չէին խնայած անոր, աշխատած են զայն բարձրացնել և գաղութին օգտակար օրգան մը դարձնել, բայց բոլոր ջանքերը ի զուր եղած են։ «Անուղղան» «ուղղութեան» բերել կարելի չէ եղած։

Անհերքելի է այս տեսակ բազմաջան, ընկած և ապագրական խօսքի անունը արատ բերող մամուլ մը գաղութին չը պիտի տար այն օգուտները, ինչ որ կարող էր տալ լուրջ խմբագրված օրգան մը։ Ճիշտ այդ բանը ի նկատի ունենալով է, որ խումբ խորհող երիտասարդներ ձեռնարկած են Ֆիլիպէի մէջ հրատարակել «Ռազմիկ» անունով թերթ մը։ Որքան ցանկալի էր, որ «Ռազմիկը» դառնար գաղութին օգուտ բերող և արժանաւոր օրգանը։

Մամուլը այժմ մերն է, եթէ գտնուին զայն նպատակայարմար կերպով ղեկավարողներ։

Մարզպետունի

ԿՈՄՍ ԲԻՒԼՈՎԸ ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ԴԷՄ

—

Միլիտարիստ Գերմանիան դժգոհ է։ Դժգոհ է, որ գերմանական աշխատաւոր մասսան չէ ուզում նրա արիւնի ու աւերման քաղաքականութեան կոյր գործիք դառնալ։ Դժգոհ է, որ նա սկսում է նրան զգացնել, թէ համբերութիւնն ու համակերպութիւնը վերջապէս մի չափ ունի, թէ նա չի գնալ մորթոտելու իր Ֆրանսիացի եղբայրներին, մի խումբ մարդկանց շահու համար։

Ու ջերմեռանդ Վիլհէլմի անտաղանդ, բայց յաւակնոտ սպասաւորը, իշխան Բիւլօվ, որին տանջում են Բիսմարկի դափնիները, կռիւ է դուրս եկել հողմաղացների դէմ։ Նա որոտում է ինչ որ «հասարակական թշնամու» դէմ, որը ուրիշ բան չէ, բայց եթէ ընկերվարութիւնը։ Ճիշտ է, այդ բիւրոկրատի հրէշը չէ քամում ժողովրդի արիւն-քրտինքով աշխատած փողը՝ սպանութեան և քանդումի գործիքներ, նորանոր զէնքեր ու նորանոր զրահաւորներ պատրաստելու և մի քանի ճարպիկ սպեկուլանտների գրպանը ուռեցնելու համար, ճիշտ է նա չէ մղում ժողովուրդը դէպի մարդկային սպանդանոցները, այլ ասում է. ապրենք խաղաղութեամբ, եղբայրաբար, չը լինենք միմեանց գազանը, ապահովենք մարդկանց, փոխանակ արիւնի ու դժբախտութեան, որքան կարելի է շատ ժպիտ, շատ բարօրութիւն,—բայց այնուամենայնիւ, նա է «հասարակական թշնամին», որովհետև յանդգնում է ձգտել արդարին ու ներդաշնակին, որովհետև համարձակվում է ըմբոստանալ արիւնի ու անիրաւութեան ամբարիշտ իդէալի դէմ, որի առաջ ծունր է դնում երկ'ւածօրէն քրիստոնեայ Վիլհէլմը։

Այսպէս, իշխան Բիւլօվ, ներկայ յունվ. 25-ին (ն. տ.), պրուսական վերին պալատում, Հէրրենհաուզում պատասխանելով մի հարցապնդումի, որ արել էին նրան՝ սօցիալիստների վերջին ցոյցերի առիթով՝ յիշեցրեց, որ նա շատ անգամներ է գիտել տալ, թէ ո՞րքան լուրջ սպառնալիք է ներկայացնում սօցիալ-դեմօկրատիան, պետութեան և անհատի իրաւունքների և ազատութիւնների համար։ Նրա կարծիքով ամեն կառավարութիւն անժխտելի պարտականութիւնն ունի կռուելու այն վտանգների դէմ, որ սպառնում են պետութեան, և ճնշելու ամեն ապստամբութիւն, որ կարող է ուղղված լինել հասարակական ներկայ կազմակերպութեան դէմ, օգտվելով այն բոլոր միջոցներից, որ տալիս են նրան օրէնքները։

Վերջին օրերումս, ասաց Բիւլօվ, կառավարութիւնը ապացուցեց, որ վճռել է կատարել իր պարտքը։

Մենք չենք խոնարհվի փողոցի բռնակալութեան առաջ, յայտարարեց իշխան Բիւլօվ, մենք չենք թոյլ տայ, որ բռնի ցոյցերով և սպառնալիքներով, մեզանից կորզեն զիջումներ։ Մենք չենք թոյլ տայ ոչ Պրուսիայում և ոչ Գերմանիայում ժողովրդական չափազանցութիւններն ու յեղափոխութիւնները։ (Ծափահարութիւններ)։

Մինչև այժմ կառավարութիւնը հարկաւոր չը դատեց ընդլայնել իր իշխանութեան սահմանները։ Բայց, նա՝ իր ժամանակին, հաստատամտութեամբ կօգտվի այն իշխանութիւնից, որով օրինաւորապէս օժտված է։ (Ծափահարութիւններ)։

Իշխան Բիւլօվը խօսելու շատ համեղ ու շատ ինքնուրոյն ձև ունի։ Արդեօք, ինչպէս ակնարկում է վերևում, կառավարութիւնը եթէ «իշխանութեան սահմանները ընդլայնել» հարկաւոր դատէր, կը մնար օրինականութեան շրջանակում։ Եթէ ոչ, այն ժամանակ շատ հետաքրքիր տեսարան կը լինէր օրէնք շինողը ապստամբված՝ իր իսկ շինած օրէնքի դէմ։ Եթէ այո, շատ զարմանալի է, որ այդքան չարացած մարդը, այդքան [illegible] է գտնվել «փողոցի բռնակալների» վերաբերմամբ, ինչպէս ասում է հոյակապ արհամարհանքով, ազնուական կանցլէրը։

Բայց ինչպէս պէտք էր ենթադրել, առաջին դէպքն է ճիշտ։ Որովհետև, իշխանացած կանցլէրը, անմիջապէս նկատում է, որ կառավարութեան է միայն վիճակված որոշել, թէ արդեօք բոպէն չ'է հասել ձեռնարկելու օրէնսդրական աւելի խիստ միջոցների, շինելու նոր, աւելի դրակօնեան օրէնքներ։

Եւ սակայն, երբ հարցը պետութեան պաշտպանութեան մասին է բացականչում է նա, ազգը, ինչպէս կառավարութիւնը, պարտականութիւններ ունի կատարելու։ Բացի սօցիալիստ տարրերից, ազգաբնակութեան միւս բոլոր խաւերը պարտաւոր են նախ սեղմված և միացեալ շարքերով դէմ կանգնել սօցիալ-դեմօկրատական ույժերին, որովհետև սօցիալ-դեմօկրատիան ուխտեալ թշնամին է հասարակութեան միացեալ ամբողջ մասին։

Իշխանը յայտարարում է, որ նա սրտի ցաւով գիտել է, ռայխստագի ընտրութիւնների ժամանակ, թէ ինչպէս քաղաքական այլ և այլ կուսակցութիւնները, ոչ միայն փոխադարձաբար միմեանց ծեծում էին, այլ, որպէս թէ դա արդէն բաւական կլինէր, դաշնակցութիւններ էին կնքում սօցիալ-դեմօկրատների հետ։

Կառավարութիւնը և հասարակութեան ոչ սօցիալիստ խաւերը պէտք է որպէս նշանաբան ընդունեն. «Պատերազմ յեղափոխական սօցիալ-դեմօկրատիայի դէմ»։

Իշխան Բիւլօվ ասում է, որ ինքը համոզված է, որ սօցիալ-դեմօկրատ կուսակցութեան ամբարտաւանութիւնը երբեք ներկայ չափերին հասած չէր լինի, եթէ նրանք միացած լինէին, պաշտպանված չը մնային, ինչպէս այժմ, այն վտանգների հանդէպ, որ սպառնում են Գերմանիայի, որպէս մեծ պետութեան, նրա ներքին բարօրութեան, նրա ազատութեան և քաղաքակրթութեան։

Կառավարութիւնը իր պարտքը կը կատարէ գործադրելով ոչ միայն օրէնքները, այլ և նա կաշխատի ստեղծել մի օգտակար համագործակցութիւն ոչ-սօցիալիստ կուսակցութիւնների և իշխանութեան մէջ։ Իշխանը վերջացնում է խօսքը աղաղակելով.

Միանանք հասարակական թշնամու դէմ։

Իշխան Բիւլօվը՝ հրաւիրելով ազգի մի մասը «սեղմված և միացեալ շարքերով դէմ կանգնել» միւս մասին, մոռանում է, որ նա՝ օրէնքի աչալուրջ պահապան՝ քարոզում է այն՝ ինչ մի հասարակ սօցիալ-դեմօկրատ, որին դատապարտում է հաստատված օրէնքը։ Իշխան Բիւլօվը մոռանում է, որ նա նոյնն է անում, ինչ որ օրէնքի դէմ ապստամբ սօցիալիստը։ Ապա էլ ո՞ւմ համար է օրէնքը. ապա էլ ո՞վ պէտք է յարգէ օրէնքը։ Մենք հոգով կը ծափահարէինք իշխան Բիւլօվին, եթէ նա չը պաշտպանէր այն, ինչ անխնայ դատապարտում է ուրիշների մօտ.—Ույժի, բռնութեան գործադրութիւնը, ներքին եղբայրասպան կռիւը։

Տ. Զ.

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Ուստր, դեկտեմբերի 11/05

Կարդալով «Մշակ»-ում օրը օրին պատահած հայ-թաթար ընդհարումների մասին, այս նոր աշխարհի մէջ մենք, տարագիրներս սրտի անկեղծ զգացումով ենք, որ կը յուզվինք։

Ճիշտ այն պահուն, երբ Վեհափառ Հայրապետի ուրախալի հեռագիրը ուղղեալ ամերիկահայոց առաջնորդարանին՝ կաւետէր եկեղեցական կալուածներու վերադարձման Կայսերական Բարձրագոյն Հրամանագիրը, ճիշտ այն պահուն, երբ մեր ալեկոծ ու սգաւոր սրտերը քիչ մը սփոփանքի—որ աւաղ անծանօթ է մեզի—բարեմաղթանքներ կարտայայտէին միւս կողմէն գուժկանի մը տխուր լուրն է որ դարձեալ կալեկոծուին, կը յուզուին ու կը մրրկին մեր արդէն սգաւոր սրտերը։

Բաքու, Երևան, Նախիջևան, Բալախան, Շուշի և այլն… Ու այս [illegible] ընդհարումներու տխուր լուրին տակ մարդ ինքնիրեն կը փորձուի հարցնել. «Ինչու է այս ընդհարումները այս երկու դրացի ազգերու մէջ՝ որոնք դարերով միասին ապրած, անած ու մեծացած են»։

Այս հարցման պատասխանատուութիւնը հոն ճգել երկար պիտի լինէր—ինչ որ մեր նպատակէն ալ դուրս է։ Ինչ որ սակայն մեր տարագիր մտքին ամենէն մօտիկ է և մտադրել կընէ մեզ—այդ ընդհարումներու տխուր հետևանքն եղող մեր ռուսահայ կարօտեալ եղբայրներուն նիւթական օգնութեան խնդիրն է։

Բաղդատելով արտասահմանեան ցիր ու ցան բոլոր հայ գաղթականութեանց հետ, ամերիկահայ գաղթականութիւնը՝ որուն թիւը 25,000-ի կը հասնի մօտաւորապէս՝ ամենէն բարեկեցիկ վիճակը ունի գէթ նիւթականապէս։ Այսքան ճոխ նիւթապէս աւելի բարելաւ գաղթականութիւնը հիմա՝ ինչ կընէ ռուսահայ կարօտեալ իր եղբայրներուն ի նպաստ։

Ամենէն առաջ սակայն անհրաժեշտ պէտքը կը զգանք, զովելու ամերիկահայը այն առատաձեռն նուիրատուութեանց համար, որ նպաստեց Սասունին, Զէյթունին (թէև մասամբ) և Թրքահայաստանի զանազան գաւառներու իր կարօտեալ եղբայրներուն։

Ամերիկահայ գաղթականութեան առատաձեռնութիւնը զովելով հանդերձ, պէտք չէ մոռնալ որ, ինքնաբուխ, այսինքն ժողովրդական նուիրատուութիւն մը շատ քիչ անգամ պատահած է։ Եւ գիտուած է որ, միշտ առաջնորդ սրբազանի կամ արժանապատիւ վարդապետի նախաձեռնութիւնները ամենէն յաջող հանգանակութիւնները եղած են։

Երկիր մը ուր՝ ամեն բան ժողովուրդով կը կառավարվի, երկիր մը որ՝ ժողովուրդը իր կամքին բացարձակ ղեկավարն է, զարմանալի է, որ մեր հայաստանցի խեղճ ու միամիտ ժողովուրդը իր կամեցողութեան բոլոր բարի յօյսերու իրագործումը իր առաջնորդ սրբազանին կամ արժ. վարդապետին վրա կը դնէ։ Ու համբերէ, որչափ կուզես համբերէ որ… առաջնորդ սրբազանը զգայ քու բարի կամեցողութիւնը, ու գործի սկսի, եթէ ինքն էլ բարեհաճի իր հանգիստը վրդովելով ի սէր քրիստոնէական հեզ և խոնարհ վարդապետութեան յանձն առնի, քաղէ քաղաք շրջելով ի նպաստ իր բազմակարօտ ժողովրդին հանգանակութիւն մը ընել։

—

Եթէ ամերիկահայ գաղթականութիւնը ունի իր անմխիթարական կողմերը, ունի նաև մխիթարական կողմն ալ։ Կայ պարտաճանաչ երիտասարդութիւն մը՝ և ուրախ եմ ըսելու, որ օրը օրին կը բազմապատկվի անոնց թիւը, որոնք ձեռքերնուն հասած չափով օգնելու պատրաստ են։ Անոնց համար հայուն խորութիւն չը կայ, ամեն տեղ հայը հայ է։

Պօսթօն հրատարակվող «Հայրենիք» ազգային-գրական և քաղաքական շաբաթաթերթը՝ ամենէն գնահատելի ճիգը կընէ ի նպաստ ռուսահայ կարօտեալ մեր եղբայրներու օգնութեան գործը ընդհանրացնելու։ Սակայն ինչպէս ըսինք, այս գաղթականութեան մէջ մեծագոյն մաս մը կայ, որուն քարացած սրտին միայն առաջնորդ սրբազանին կամ արժանապատիւ վարդապետին կոչը կրնայ ազդել։

Ու ամերիկահայոց հոգևոր առաջնորդ գեր. Յովսէփ արքեպ. Սարաֆեան, մեր ռուսահայ կարօտեալներու օգնելու որև է փութկոտութեան նշան ցոյց չը տար։ Արդեօք կը սպասէ որ «հրահանգ գայ իրեն, հոգևորական բարձրագոյն իշխանութիւնէն», ասիկայ իր սովորական անվերջանալի հրահանգն է որ շատ անգամ կրկնած է նման օրինակ պահանջմունքներու մէջ։

Բայց ներեցէք սրբազան հայր՝ որ գիտել տամ Ձեզ թէ ինչպէս, կամ քանի տեսակ կրնայ ըլլալ հրահանգը հոգևորական բարձրագոյն իշխանութիւնէն. երբ ծերունին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գեր. Գարեգին արքեպսպ ի նախագահութեամբ կը կազմէ մասնախումբ մը Թիֆլիզի մէջ, ռուսահայ կարօտեալներուն օգնելու։

Հրէաները այս երկրին մէջ, բարունապետէն սկսեալ մինչև փողոցները չափող (քարի կտորներ, հին կօշիկներ և այլն…) հաւաքողները փութկոտ գործունէութիւն մը ցոյց կուտան՝ ի նպաստ Ռուսաստան բնակող իրենց եղբայրներուն նիւթական օգնութիւն մը ընելու համար։

Անցեալ շաբթու ամերիկահայ թերթերը հրատարակեցին՝ ռուսաբնակ հրէաներու օգնող մասնախումբին այն կոչը՝ որ կազմված է Պօսթօնի մէջ նախագահութեամբ քաղաքապետ Ֆիցջէրլդին։ Այս յանձնախումբը ոչ միայն հրէաներէն կը հանգանակէ, այլ կոչ կընէ բոլոր քրիստոնեայ եկեղեցիներուն, որ աստուածային ողորմածութեամբ նիւթական նուէր մը ընեն ի նպաստ ռուսաբնակ Իսրայէլի որդւոց։

Պօսթօնի հայոց հոգևոր հովիւ Տէր-Թէօդորոս քահանայ Իսահակեան՝ որուն ուղղուած էր այդ կոչը և որ հրատարակութեան տուած էր, իր ծանուցագրութեանց մէջ, տող մը, բառ մը և ոչ իսկ ըսած էր ռուսահայ կարօտեալ մեր եղբայրներուն ի նպաստ։

—Ախ… հեզութեան, եղբայրութեան և կարեկցութեան մարմնացումն յաջորդները։

—

Անցեալ շաբթու «Մշակը» կը կարդայինք քանի մը անձինք հաւաքուած, ուր ի մէջի այլոց շարք մը խօսքերու փոխանակումէն ետքը հանգանակութիւն մը ընելով մեր մէջ, 30 րուբլի ղրկեցինք «Մշակին», յանձնելու համար նպաստամասոյց յանձնաժողովին։

Ո՞ւր էր թէ գէթ այսպէս ընդհանրանար ռուսահայ մեր կարօտեալ եղբայրներուն օգնելու կարևոր գործը՝ ամերիկահայ գաղթականութեանս մէջ։

Փառնիկ

ԲԵՐԼԻՆԻ ՃԱՌԸ

—

Մենք հաղորդեցինք («Մշակի» № 16) արդէն, որ Գերմանիայում յունվարի 9/22-ին, կիրակի, սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնները մեծ ցոյցեր սարքեցին ի պատիւ ռուսական յեղափոխութեան առաջին տարեդարձի և այդ օրը անուանեցին «Կարմիր կիրակի»։ Բեռլինում կայացած բազմաթիւ միտինգներից մէկում, Մօաբիտ թաղում կայացած սօցիալիստների հաւաքոյթում պարագլուխ Բեբելը հետևեալ ճառն արտասանեց.

—Ռուսական յեղափոխութիւնը իր տարեգրութիւնը սկսում է անցեալ տարվայ յունվարի 22-ից, երբ Գապօն քահանայի առաջնորդութեամբ բանուորական մի խաղաղ թափօր ընդունվեց կապարեայ ընկոյզներով (աղաղակներ-Նախատինք, Ամօթ!)։ Այդ օրից այլ ևս չը կայ խաղաղութիւն ռուս կառավարութեան, ռուս ժողովրդի մէջ։

«Այժմ և լատիշ-էստոնական ազգաբնակութիւնը ըմբոստացել է իր հարստահարիչների դէմ և գերմանական-բալթիական յունկերութիւնը հնձում է միայն այն, ինչ որ ինքն է սերմանել (աղմկալից հաւանութիւններ)։ «Կրոյց-Ցայտունգ» լրագրի արհեստական արտասուքները զարմանալի չեն. չէ՞ որ յունկերները նրա արիւնից և մարմնից են։ Պաշտօնական Պրուսիան ընդդիմանում է այն շարժման, որով բռնկվել է համայն քաղաքակիրթ աշխարհը ընդհանուր ընտրողական իրաւունքի համար։ Այստեղ, մեզ մօտ, պահպանվում է դեռ այն ընտրողական իրաւունքը, որ Բիսմարկը կոչեց «ամենաողորմելի և թշուառ»։ Ոչ մի տեղ չը կայ աւելի անհեթեթ, յիմար, անմիտ ընտրողական իրաւունք, ինչպէս պրուսական լանդտագի ընտրողական սիստեմն (բուռն հաւանութիւն)։ 1893 թ. օրինակ, պրուսական 6օթն մինիստրներ մասնակցում էին ընտրութիւններին իբրև 3-րդ կարգի ընտրողներ, երեք մինիստր՝ իբրև 2-րդ կարգի, ոչ մի մինիստր չը կար 1 կարգի մէջ, բայց այդ առաջին կարգի ընտրողներ էին կալւասի Ֆաբրիկանտ Հիքսերը և անտառականաց պահողները (ծիծաղ)։

«Այսօր սօցիալ-դեմօկրատները ցոյցեր չեն անում փողոցներում, բայց կը գայ մի օր, երբ նրանք բոլորովին կը հեռանան փողոցներից և ընդհանուր գործադուլ կը հրատարակեն։ Ընդհանուր ընտրողական իրաւունքի նուաճումը—գերմանական սօցիալիստ պրօլետարիատի ամենամօտաւոր նպատակն է»։

Բեբելից յետոյ րէյխստագի պատգամաւոր Հայնէ ասաց.

—Մենք ջերմ բարեմաղթութիւններ ենք ուղարկում ռուսական ազատագրական շարժման աջողութեան համար, որ օգուտ կը բերէ և եւրոպական ամբողջ կուլտուրային։

Իսկ պատգամաւոր Զինգէրը այսպէս խօսեց.

—Յետադիմականները դաւադրում էին Բեռլինում ևս արիւնալի բաղնիք սարքել սօցիալ-դեմօկրատների համար և խեղդել նրանց։ Ամբողջ աշխարհի աչքերը յառած են Բեռլինի վրա։ Ի հարկէ խաղաղ ռուս յեղափոխութիւնը չէ կարող այն հետևանքն ունենալ, որ սօցիալիստական վերջնական նպատակը իրագործէ, որովհետև դրա համար դեռ չէ հասունացել Ռուսաստանի տնտեսական կազմուածքը, բայց այդ յեղափոխութիւնը կարող է այնու ամենայնիւ համարուել նոր ժամանակների սկիզբն։

Այդ օր քուէարկված որոշումների մէջ ասուած է, որ գերմանական սօցիալ-դեմօկրատները պահանջում են ընդհանուր ընտրողական իրաւունքի ներմուծումը, իրանց խորին համակրութիւնն են արտայայտում ռուսական ազատարար շարժման և գերմանական պրօլետարիատի պարտաւորութիւնն են համարում բոլոր ոյժերով աջակցութիւն ցոյց տալ այդ կռւի շահերին, որի աջողութիւնը լինելու է և գերմանական պրօլետարիատի աջողութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրետէ։ Մի քանի ամսից յետոյ պիտի գումարուի կրետական Ազգային Ժողովը, վերաքննութեան ենթարկելու համար կրետական սահմանադրութիւնը։ Ազգային ժողովի ներկայացուցիչները՝ դուցէ առիթից օգտուեն տեսնելու, թէ ինչ են մտածում պաշտպան պետութիւնների այն գրքի մասին, որ բռնեցին վերջին ապստամբութեան ժամանակ։ Այդ գիրքը, մանաւանդ ռուսականը, երբէք պատուաբեր չեղաւ, կամ գոնէ համապատասխան «պաշտպան» տիտղոսին։ Նա ամբողջեց իր պաշտպանութեան շրջանում գտնվող ապստամբներին, անխախտ պահելու համար Թիւրքիայի անուանական գերիշխանութիւնը։ Ասում են, որ Կրետէի կառավարիչ Գէօրգի իշխանը մտադիր է հրաժարուելու և նրա յաջորդ է համարւում իշխան Նիկօլան, նրա եղբայրը։ Բայց Գէօրգին տեղ Նիկօլան նստելով՝ մի՞թէ պիտի լուծվի կրետական հարցը, մի՞թէ վերջ պիտի գտնեն շարունակվող ապստամբներն ու ապստամբութիւնները։ Պարզ է թէ ոչ։ Կրետական հարցի լուծումը կախված է մի բանից. թողնել, որ կղզեցիները որոշեն իրանց բաղդը—միանան մայր-երկրին, որին ձգտում են ու պիտի ձգտեն մինչև վերջը։

Սուլթանի թիկնապահները.—Աբդուլ-Համիդի ալբանացի թիկնապահ զօրքերը խելօք չէին ուզում մնալ։ Սուլթանը վճռեց նրանց հեռացնել։ Բայց, վճիռը մի քիչ փափուկ էր։ Գոնէ նրա իրագործումը առանց դժուարութիւնների չէր կարող լինել, մանաւանդ, եթէ ամբողջ միասին ուղարկվէին մի քիչ օդ առնել իրանց հովասուն սարերում։ Ուստի սուլթանը մտածեց ուղարկել նրանց մաս առ մաս։ Բայց, այդ խմբերից մէկը, հասնելով Սիրքէջիի երկաթուղու կայարանը, Կ. Պօլսի Ստամբուլ կոչված մասում, երևի իբրև հրաժէշտի ողջոյն, սկսեց կայարանի պատուհանում արձակել րէվօլվերներից։ Հասկանալի է կայարանի և շրջակայ թաղերի սարսափը։ Ցեղոյ ալբանացիները՝ չափազանց վարժված պալատի քաղցրութիւններին, դժկամակեցին մեկնել, թողնել «Բոսֆօրի գեղածիծաղ ափերը»։ Հազիւ հազ կարելի եղաւ սակայն նրանց նստեցնել երկաթուղի։ Բաց թիկնապահների իմաստութիւնը երկար չտևեց։ Սիրքէջիից մի քառորդ ժամ հեռու, Մաքրիքէօյ կայարանում, նրանք նորից սկսեցին րէվօլվէրային համերգը։ Պատմութիւնը այստեղ լռում է արդէն։ Արդիօք եռանդուն ու քաջ զինուորները ապահով հասան իրանց լեռները, մի քիչ էլ բուլղարների վրա փորձելու իրանց վարժ նշանառութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 յունվարի

ՊԵԿԻՆ, 24 յունվարի։ Ռուսաց և չինաց ներկայացուցիչները քննում են ռուս-չինական դաշնագրի ծրագիրը։ Ասում են, որ ռուսաց առաջարկութիւններից մէկն է՝ Մանջուրիան ազատ դարձնել բոլոր ազգութիւնների համար, տալով նրանց բոլորին հաւասար արտօնութիւններ և իրաւունքներ։ Ռուսաստանը պահանջում է յանձնել իրան մի քանի կօնցէսսիաներ Մօնղոլիայում և առևտրական արտօնութիւններ չինական Թուրքեստանում, եթէ որ Չինաստանը բաց անէ Կալգանը և Ուրգան արտաքին առևտրի համար։ Միւս պահանջները վերաբերում են մանջուրական մի քանի նահանգներում առևտրական իրաւունք ստանալու՝ ինչ որ ունի Ճապօնիան։ Չինաստանը պահանջում է կատարել իր խոստումները՝ ռուսական երկաթուղային պահակները հեռացնել, որովհետև Ճապօնիան չինաճապօնական դաշինքի համաձայն կը հեռացնէ այն ժամանակ, երբ Ռուսաստանը հեռացնէ։ Ռուսաստանը չէ ուզում Եալուի անտառային կապալները յանձնել Չինաստանին, առարկելով, որ մի քանի դաշնագրում արդէն այդ բոլոր պայմանները մտցրված են։ Չինական շրջաններում երկիւղ են յայտնում, որ Ռուսաստանի յարձակողական գիծը Հեռաւոր-Արևելքում Մանջուրիայից կը թեքվի դէպի Մօնղոլիան և չինական Թուրքեստանին, ուստի ի նկատի ունեն կենտրոնացնել այնտեղ զինուորական ոյժերը։ Այդ պատճառով էլ առանձին մեծարանքներով են ընդունել Մօնղօլական իշխաններին, որոնք հարկեր են բերել Պեկին։ Չինական պրինց Սու կը նշանակվի Մօնղոլիա ուղարկվող դեսպանութեան առաջ։ Դեսպանութիւնը տանում է իր հետ ընծաներ և գեղարուեստական պարգևներ (Րէյտեր)։

ԾԱՆՈԹ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ։ Մեր արած ստուգութեան հիման վրա թոյլ ենք տալիս կասկածել Րէյտէրի լուրի ճշտութեան մասին։

ԿԻԵՎ, 25 յունվարի։ Կազատինի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ, առանց ուսումնարանական վարչութեան գիտութեան, արձակված է պաշտօնից Կազատինի երկաթուղային դպրոցի ուսուցչական ամբողջ կազմը։

ՆԵԱՊՕԼ, 25 յունվարի։ (Ստեֆանի) Վէզուվը շարունակում է վիժել։ Մօտիկ գտնվող տեղերը անվտանգ են։

ՊԱՐԻԶ, 25 յունվարի։ (Հավաս) Մինիստրների խորհուրդը քննելով եկեղեցական կայքերի ցուցակագրութեան ժամանակ պատահած միջնադէպերը, որոշեց անդադար շարունակել ցուցակագրելը։ Պարիզում և գաւառներում դատ է սկսված զանազան եկեղեցիների քահանաների դէմ, որոնք խափանել են եկեղեցին պետութիւնից անջատելու օրէնքը և ընդդիմացել իշխանութեանը։

ՄՕՆՊԷԼԻԷ, 25 յունվարի (Հավաս) Եկեղեցական կայքը ցուցակագրելու համար ինժեներների կօրպուսի զինուորների օգնութեամբ ուժով կոտրել են տաճարի դռները։ Դրսում ամբոխը հոգևոր երգեր էր երգում, աղմկում էր, ապա գնաց պրէֆէկտուրայի մօտ. հրդեհաշէջները ցրեցին ամբոխին։

ՍԷՆ-ԿԼՕՏ, 25 յունվարի։ (Հավաս) 2000 հոգուց բաղկացած ամբոխը հակակղերական ցոյց արեց կարմանիօլը երգելով, կոտրեց եպիսկոպոսի պալատի և տաճարի դռները, փողոց նետեց եկեղեցական իրերը։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 25 յունվարի։ Ազգային բանաստեղծ Րունէբերգի ծննդեան տարեդարձի օրը քաղաքը շքեղ կերպով զարդարված էր։ «Բանուորների բարեկամը» ընկերութիւնը փառաւոր լապտերներով թափօր կազմեց։

ԲԱԳՈՒ, 25 յունվարի։ Միջնորդութիւն է յարուցված թուրքերի համար ընթերցարան բանալու, մուտքը 2 կոպէկով։ Իշխանութիւնը համակրանքով վերաբերվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Ծովային մինիստրութիւնը հրաման արձակեց, որով արգելված է ծովային վարչութեան մէջ ծառայող անձանց անխտիր չը մտնել միութիւնների, կազմակերպութիւնների և կուսակցութիւնների մէջ, որոնք կազմված են քաղաքական նպատակներով, և ներկայ չը լինել քաղաքականութիւնը քննադատող ժողովներում։ Նրանք, որոնք ընտրողական իրաւունք ունեն, կարող են մասնակցել ընտրողական ժողովներում խորհրդակցելու թէ ում արժանաւոր է ընտրել։ Այս կանոնների ենթարկվում են բոլոր պահեստում գտնվող և պաշտօնաթող անձինք, որոնք հագնում են իրանց պաշտօնազգեստը։ Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական մասնաժողովում սկսեցին քննութիւնները։ Մասնաժողովը արևմտեան վկայական ստացողների խնդրքով քննութիւնների տևողութիւնը յետաձգեց մինչև մայիսի 16-ը. այդ ժամանակ էլ կը վերջանան։ Խնդիրների ընդունելութիւնը շարունակվում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի։ Հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ Նորին Կայսերական Բարձրութիւն գեներալ-ֆելդ-ցեյխմեյստեր Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլաեվիչի անունով նրա 50 տարի շարունակ ռուսական արտիլլերիայի գլուխ կանգնած լինելու առթիւ։

26 յունվարի

ՄՕՍԿՎԱ, 25 յունվարի։ Առևտրա-արդիւնաբերական կուսակցութեան բիւրօն կօմիտէտների խորհրդի քննադատութեան առաջարկեց ագրարային, հրէական լրագիրներ հրատարակելու, արհեստաւորների շահերի պաշտպանութեան և դէպի մնացած չափաւոր կուսակցութիւններին ունենալիք վերաբերեալ հարցերը։ Քաղաքագլուխը Լիւբլինից ստացաւ—ծանօթացնելու համար ռուս հասարակութեան, Խոլմսկի Ռուսաստանի հարցերի հետ—Եւգենիոս եպիսկոպոսի թուղթը, որ անհրաժեշտ է համարում բաժանել լեհական թագաւորութիւնից Խոլմսկի Ռուսաստանը։ Վերջին օրերում անկախների ժողովարանի կազմի մէջ մտան 150 մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Գեներալ Լինեվիչի ամենահպատակ հեռագիրը Խարբինից յունվարի 24-ից. «Երէկ գեներալ Րէննէնկամֆը հասաւ Չիտա։ Ամենը անցաւ առանց արիւնհեղութեան։ Քաղաքի և երկաթուղային արհեստանոցների լիակատար զինաթափումը կատարվում է անընդհատ։ Գլխաւոր ապստամբներից ձերբակալված են 200 յեղափոխականներ։ Մի քանիները փախել են։ Գեներալ Րէննէնկամֆը հեռացրեց զինուորական նահանգապետի պաշտօնից գեներալ Խոլշչէվնիկովին՝ անգործունէութեան պատճառով Խոլշչէվնիկովի փոխարէն Անդրբայկալեան շրջանի ժամանակաւոր զինուորական նահանգապետ նշանակեց գեներալ Պօլկօվնիկովին։ Րէննէնկամֆի հաղորդագրութեան համաձայն, Չիտայում գեներալ Պօլկօվնիկովի և Սիչէվսկու ձեռք առած միջոցներով, խաղաղութիւնը Անդրբայկալեան շրջանում վերականգնվում է շտապով։ Վլադիվաստոկում և Խարբինում զօրքերի մէջ ամեն ինչ հանգիստ է»։—Գեներալ Արտամանովը Վլադիվաստոկից հաղորդում է, որ բերդում հանգիստ է, ապստամբները հանդարտացան։ Մի քանիները կամենում են փախչել հեռացող նաւերով։ Խարբինի զօրքի մէջ հանգիստ է։ Դանիական ընդծովեայ թելը Վլադիվաստոկից փչացաւ. հաղորդակցութիւնը Նագասակիի հետ կտրված է։

ԿԱԶԱՆ, 25 յունվարի։ Չերնոզուբովի ապրանքային գրասենեակում ոստիկանութիւնը գտաւ 170 բերդան, որ ուղարկված էին գործարանից և որ պիտի ուղարկվէին ուրիշ տեղ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Պաշտօնական։ Սինօդի նոյեմբերի 26-ի որոշմամբ, առաջարկված է—Սինօդի որոշած ակադեմիական կանօնադրութեան ընդհանուր հիմունքները գործադրել հոգևոր ակադեմիաներին, չը սպասելով կանօնադրութեան վրա մշակման, եթէ ակադեմիական կեանքի սովորական ընթացքը կը վերականգնվի։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց այս յունվարի 20-ին առաջարկել Սինօդին—գործ անել յիշված սկզբունքները ակադեմիաներում իբր ժամանակաւոր միջոցներ, մինչև եկեղեցական համագումարի հրաւիրելը։ Այժմ Պետերբուրգի, Մօսկվայի և Կիևի միտրոպոլիտների և Կազանի արքեպիսկոպոսի հաղորդագրութիւններից միամտվելով, որ տարվայ սկզբից պարապմունքները հոգևոր ակադեմիաներում վերսկսվել են և շարունակվում են գնալ սովորական ընթացքով, և այս բարի օրինակը վերագրելով ինչպէս դասատուներին, այնպէս և աստուածաբանական գիտութիւնների ակադեմիայի ուսանողներին,—Սինօդը յունվարի 25-ի կանօնով—որոշեց՝ 1) 1907 թ. նոյեմբերի 24-ի սինօդական որոշման մէջ, բացատրած հիմունքները և հոգևոր ճեմարանների յատկութիւնները այժմ գործադրել, 2) յանձնարարել ուսումնարանական խորհրդին մտցնել ակադեմիայի գործածելի կանօնադրութեան մէջ անհրաժեշտ համաձայնութիւնները»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Պրօֆէսօրների մէջ ծագեց եռանդուն ագիտացիա—բարձրագոյն ուսումնարաններում պարապմունքների վերսկսման առիթով։ Բացվեց ապահովագրական ընկերութիւնների կառավարիչների համագումարը։ Քննվում է տոկոսային թղթերի ընկնելու հարցը, ջարդերից առաջացած ընկերութիւնների վերաբերմունքը դէպի ջարդերից, ագրարային անկարգութիւններից և զինված ապստամբութիւնից առաջացած վնասները։

ՆՈՎՈՐՕՍԻՅՍԿ, 25 յունվարի։ Ժամանակաւոր-նահանգապետը և քննիչի օգնականը մեկնեցին Սօչի, որտեղ մինչև օրս յեղափոխականները ամրացած են՝ Գլատունսկի գիւղում։ Ուղարկված են նաւերով պլաստունների մի քանի հարիւրեակ։

26 յունվարի

ՄՕՍԿՎԱ, 25 յունվարի։ Տամբովի նահանգից երէկ վերադարձաւ երդուեալ հաւատարմատար Պլեվակօ, որը գնացել էր գիւղական ժողովուրդում տարածելու հոկտեմբերի 17-ի կուսակցութեան ծրագիրը։ Նա նկատել է, որ գիւղացիները միապետական կառավարութեան կուսակից են և անհամբեր սպասում են Պետական Դումայի գումարվելուն։ Եաուզի հաշտարար դատաւորի մօտ կան 300 գանգատներ Միխայիլչենսկի գործարանի բանուորներից, որ պահանջում են գործադուլի ժամանակի համար վճարել։ Գործերը յետաձգված են, որովհետև հաւանական է, որ փոխադարձ հաշտութիւն կայանայ։

ԿԵՐՉ, 25 յունվարի։ Երեկոյեան լիք բնակարանի մէջ ծանր վիրաւորված է տարեհասկի գնդակով պրիստաւ Նավօրսկին։ Գնդակը արձակված է փողոցից։ Մի քանի մարդիկ դուրս վազեցին, բայց դարպասները ամրացած գտան։ Չարագործը անյայտ մնաց։

ՎԱՐՇԱՎԱ, 25 յունվարի Վարշավայի նահանգական դատարանը երկամսեայ բանտարկութեան է դատապարտել «Курьеръ Поранна»-յի խմբագիր Փրիզէին։ «Варшавск. Курьеръ»-ի առիթով երէկ կալանաւորված է «Варш. Газета»-ի խմբագիր Լէշնովսկին և 300 րուբլի տուգանք տալով արձակված է։

ՎԱՐՇԱՎԱ, 25 յունվարի։ Գիշերը մի քանի զինված մարդիկ գաւառական Բլօն քաղաքում շրջապատեցին պօստատունը, մահացու կերպով վիրաւորեցին կառավարիչ Գոյէվսկուն, թեթև կերպով պաշտօնեայ Գերմանին, երրորդին էլ կապկպելով, գողացին 1300 րուբլի գումար և նամականիշներ։ Գոյէվսկին առաւօտեան մեռաւ։ Կողոպտողները անյայտ մնացին։

ՊԱՎԼՕԳՐԱԴ, 25 յունվարի։ Զեմստվօյին վարչութիւնը ցոյց դրեց ի գիտութիւն Պետական Դումայի ընտրողների լրացուցիչ ցուցակները։ Քաղաքային վարչութիւնը ցուցակները կը վերջացնէ մինչև փետրվարի 10-ը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 25 յունվարի։ Ուսսուրիական երկաթուղին միացվում է չինական-արևելեանի հետ։ Կազմված է մասնաժողով գիծը ընդունելու համար։ Տեղական տնտեսական գործերի գլխաւոր վարչութեան մէջ կազմված է առանձին մի մասնաժողով պահեստի զինուորների համար սուրբային արտօնութիւններ մշակելու նպատակով։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը թոյլտուութիւն է խնդրել հաւասարեցնել մասնաւոր իգական դպրոցներում ուսանողների արտօնութիւնները իգական գիմնազիաների հետ։ Այդ հաւասարեցումը չէ վերաբերում ուսուցչական կոչման՝ պետական գումարների զգալի ծախսերից խուսափելու համար։

ՊՍԿՕՎ, 25 յունվարի։ Ոստիկանութիւնը հետևակ զօրքի օգնութեամբ կալանաւորեց ագրարական շարժումների ապստամբներին։ Կալանաւորված են 29 գիւղացիներ։ Շարժումը, ըստ երևոյթին, թուլանում է։

ՍԱՄԱՐԱ, 25 յունվարի։ Դատաստանական պալատի որոշմամբ դադարեցվեց է „Самарская Газета“ թերթը։

ՕՐԵՕԼ, 25 յունվարի։ «Орлов. Вѣст.»-ի խմբագիրը պատասխանատուութեան է ենթարկվում քրէական օրէնսգրքի 12 յօդ. համաձայն։

ԽԱՐԿՕՎ, 25 յունվարի։ Մեռաւ բժշկական ընկերութեան նախագահ պրօֆեսսօր Կրիլով։

ՊԱՐԻԶ, 25 յունվարի։ Դիպլօմատիական շրջաններում ասում են, որ ոստիկանութիւնը վերակազմելու ծրագիրը, որը քննում է Ալժէզիրասի կօնֆէրենցիան, ոչ թէ մտցնում է եւրոպական ոստիկանութիւն, այլ կազմում է Մարօքկօյի ոստիկանութիւնը եւրոպական կարգերով, որի համար Ֆրանսիան կը պահանջէ իր համար առաջնակարգ տեղ։ Այդ շերտի վրա հաշտութիւն կը կայանայ։

ԲԻՐԻԻԶ, 25 յունվարի։ Ուսուցչական խորհուրդը արձակեց պաշտօնից զեմստվոյին ուսումնարանի երկու ուսուցիչներին, որոնք ստորագրել էին ուսուցչական միութեան որոշմանը՝ միանալու գիւղացիական միութեանը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տելեֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և ելեքտրո բուժութիւն։
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում էլեկտրօլիթիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համարների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։

(Հ. ա. կ.) 31—100

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.
(Դուկիս. Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մարմնի, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ՏԱՐԱՍՕՏՆԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ՏԻԿ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԴԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱՐԵՍԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի (համաձայնութիւն եւ կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունվարի 29-ին, Հայոց Դրամատիքական ընկերութեան դերասանների խումբը կը ներկայացնէ

I

ՄԿՆԻԿ

Վօդ. 1 գործողութեամբ, Վլոյրի։

II

ԱՐՋ

Վօդ. 1 գործ. Չեխովի։

III

ԽՍ ԷԼ ԲԻ ՄՕՑԻՔԼՈՒԹԻՆ

Վօդ. 1 գործ. Գ. Տէր-Գրիգորեանի։

Մասնակցում են. տ. Մելիքեան, պ.պ. Պետրոսեան, Յարութիւնեան, Ազեան, Աւելիսանեան, Ուշաեանի։

Տեղերի գները. 1-ին կարգը 1 ր., 2-րդ կարգը՝ 75 կ., 3, 4, 5 կարգերը՝ 50 կ., 6—10 կարգերը՝ 40 կ., և 11—15 կարգերը՝ 30 կ.։

Հիւրերը, բացի դրանից, վճարում են մուտքի փող 1 րուբլի։

Սկիզբն է ճիշտ 7½ ժամին երեկոյեան, վերջը—10½ ժամին գիշերվայ։

(ու.շ.կ.) 1—3

Մի ուսուցիչ ցանկանում է սենեակ ունենալ մի ընտանիքում, որի փոխարէնը կը պարապի երեխաների հետ հայերէն, ֆրանսերէն և Թուաբանութիւն։

Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։

1—5

Լոյս տեսաւ Ն. Լալայեանցի

„Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ“

1. Ընդհանուր դատողութիւններ։ Գինն է 10կ.։ Օտարաքաղ. 50 օր. ոչ պակաս գնողները ստ. 30% զիջումն։ Հասցէն. Тифл. Тамар. ул. соб. д., у полотна жел. дор.

1—1

Մի տիկին 100 րուբլու կարիք է զգում իր ամուսնուն հիւանդութիւնից ազատելու համար, ապա թէ ոչ մահն անխուսափելի է։ Բարերար տիկնանց և պարոնների ուշադրութիւնն է հրաւիրում մի կերպ օգնելու ինչ պայմանով էլ ուզում է լինի։ Հասցէն՝ Гановская ул. № 17 բակում, Սաթենիկ Բաբուրեանցին։ (տ.օ.) 2—3

Դռնապաններ ցանկացողները կարող են դիմել Ագամեանի տանը տնտեսատուն Авлабаръ, Кахетинская, № 312. բաղեցիներին և կլդինցիներին։

2—3

Մի հայուհի ցանկանում է դասեր ունենալ հայերէնից, ֆրանսերէնից, իսկ ռուսերէնից՝ մինչև առաջին դասարան. գիտէ և երաժշտութիւն. համաձայն է գնալ նաև քաղաքներ, փոքր ընտանիքի մէջ. հասցէն՝ Графская ул., Троицкій переулокъ., д. Теръ-Никогосова № 4 и 7 узнать въ обществѣ учительницъ. (կ.ե.) 2—2

ԴՊՐՈՑ

ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Ուսումը վերսկսվում է յունվարի 9-ին
Բեհբութեան փ. տ. № 25.

ՏԻԿԻՆ ՅՕՐՏԱՆՍ ԴԱՒԹԵԱՆՑ

Շվեյցարուհի, դիպլօմով—տալիս է ֆրանսերէնի դասեր՝ խօսակցութիւն, քերականութիւն՝ գրականութիւն։ Մէթօդ Բերլից։ Գերմաներէնի և անգլիերէնի խօսակցութիւն։

Հասցէն՝ Гудовичъ 6, домъ Питоева.

2—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ռ.) 36—12

А. Агаронянъ. Расказы съ біографическимъ очеркомъ и портретомъ автора цѣна 30 к. Գումարով առնողներին 30—40% զիջում.

Памяти великаго артиста П. 1. **Адамяна.** цѣна 10 к. Դիմել Армавиръ к/о. Армянск училище учителю А. Генджіанъ.

3—3

Լոյս տեսաւ
Հ. Առաքելեանի
«ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ»
IX գիրքը, այն է

ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

գրեց Հ. Առաքելեան

Բաղկացած երեք մասերից—I. Տասն օր Կ. Պօլսում. II. Տասն օր Պիրամիդների աշխարհում. III. Տասն օր Երուսաղեմում.

Գինն է 40 կ. գումարով առնողներին 10% զեղչ։ Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և իրան հեղինակին, Թիֆլիս, խմբագրութիւն «Մշակի» լրագրի։ 2—5

Լոյս տեսաւ նոր գիրք

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Ս. Վ. Արզումեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արհեստաւորների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկէվիչի փողոց, № 13։ (հ.կ.ե.) 2—28

ԲԺԻՇԿ

Տ. Խախանեան

Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.

Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։

Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նասուխովի տանը։

(ե. հ. շ.) 7—15

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կոջորսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կոջորսկի փողոցից № 2, (տ. օ.) 38—300

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

Բժիշկ Միքայել Գեղեվանովի

Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօլյուբանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելեֆօն № 791. (տ. օ.) 34—150

ԲԺՇԿԱՊԵՏ

Բ. Նաւասարդեան

Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 44—100

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆլիսի, միզային, վեներական և մարմնի ախտ ունեցող հիւանդներին ամեն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեհբուտովսկի և Պասկեվիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։

(տ. օ.) 38—100

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

սրանով յայտարարում է, որ այս տարվայ յունվարի 26-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է մրցութիւն կանալիզացիա կազմելու համար Վախտանգովսկայա և Կօլխետսկայա փողոցներում, 7-րդ քաղաքամասում.

50 սաժ. բէտոնի խողովակի 0,25×0,16
10 սաժ. » » 0,375×0,25
2 ջրհոր։

Վերջին յիշված աշխատանքներից իւրաքանչիւրի գնի մասին առանձին պէտք է գրաւոր յայտարարութիւն տալ կնքված ծրարներով մինչև յունվարի 26-ը։

Սակարկել ցանկացողները կարող են պայմանները տեսնել վարչութեան շինարար բաժանմունքում ամեն մի օր ցերեկվայ ժամի 1—3 գործ № 36/905 թ.։ 3—3

ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ

ՍԱՊՕՆԸ

ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՕՆՆ,

որ ունի իր հետ [illegible]

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

(15) 5—12

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.

„ԱՇԽԱՏԱՆՔ“

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ

Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրօլետարիատի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ։

«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին։

Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է։

Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու։

«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ։

«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի համար տարեկան	4 րուբ. —	Արտասահմանի համար տարեկան	5 րուբ. —
կէս տարին	2 » —	կէս տարին	2 » 50 կ.
ամիսը	— — 40 կ.	ամիսը	— — 50 »
հատով №-ը	— — 10 »	հատով №-ը	— — 15 »

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 րուբլի, մայիսին՝ 1 ր. և սեպտեմբերին՝ 1 րուբլի.

1906 թուականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրաւական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից։

«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ։

Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ“, Бебутовская ул. д. № 27։ Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.

Խմբագիր-Հրատարակիչ՝ [illegible]

(ե. ռ.) 4—12

Մայրենի լեզու,

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ, 32-դ տիպ, գինն է 25 կ.

Ներկայ 32-րդ տպագրութեամբ այս փոքրիկ գրքոյկը բոլորում է իր գոյութեան երեսնհինգ տարին։ Որպէս տօնական հրատարակութիւն՝ ներկայ տպագրութիւնը ենթարկվել է մանրամասն վերամշակման. բուն ընթերցարանը, որ բաղկացած է ԺԹ մանրաշրջաններից, խմբագրվել է նորից։ Այբբենական մասի բոլոր պատկերները, որոնք տալիս են բարոյախօսական զրոյցների և իրազննական դասերի նիւթը և որոնցից պէտք է վերցնել վերլուծանելի բառերը առաջադրութեան համար, փորագրված են Բեռլինում և Ժընեվում. ամեն մի տպագիր դասի համար դրված կան գրչագիր օրինակներ։ Գրքի սկզբում, բացի ընդարձակ յառաջաբանից, դրված է մի օրինակելի դաս ուսուցիչների համար։ Այբբենական մասի վերջում, ուսուցանողների դիւրութեան համար, դրված են դժուար բառերի բացատրութիւնները։ Ընթերցարանական մասի մէջ ևս, ամեն մի մանրաշրջանից յետոյ, ուսուցանողները կը գտնեն համառօտ բառարան դժուար բառերի, որոնց պիտի լրացնեն իրանք ուսուցիչները ամեն մի յօդուածի համար, եթէ կարևորութիւն զգան։

Հայոց լեզուի բոլոր ուսուցիչներին, որոնք կը հաղորդեն ինձ իրանց հասցէները, հաճութեամբ կուղարկեմ մի մի օրինակ ներկայ տպագրութիւնից որպէս նմուշ, իսկ այն ուսուցիչները, որոնք Թիֆլիսումն են, կարող են անձամբ վերցնել իրանց օրինակը Կենտրոնական Գրավաճառանոցից, ուր գտնվում է իմ գրքերիս պահեստը։

Վաճառման պայմաններն են՝ հարիւրով գնողներին 20% զեղչ, հինգհարիւր և աւելի օրինակ գնողներին 25% զեղչ։

Նիկողայոս Տէր-Ղևոնդեանց

2—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՍԱՓՐԻՉ“

Հումոր-Սատիրական-պատկերազարդ հանդէս, որ լոյս պիտի տեսնի Ս.-Պետերբուրգում 1906 թ. սկզբներին հայ և ռուս լեզուներով։

«Սափրիչը» պիտի պարունակէ իր մէջ։—1) Ֆէլիէտօններ, 2) Վարչական և առօրեայ կեանքի մասին տեղեկութիւններ. 3) Լուրեր, նամակներ և հեռագրեր Սաթանայեան անդր-դերեզմանային գործակալութիւնից. 4) Առանձին բաժին հանդէսների հանդէս. 5) Իւմօր-սատիրական յայտարարութիւններ և 6) Սովորական յայտարարութիւններ։

«Սափրիչի» ամեն մի համարում բացի տեքստից զետեղված կը լինի 8—15-ի չափ և գունաւոր-սատիրական նկարներ։

«Սափրիչ»-ի բաժանորդները կը ստանան երկու պրէմիա ֆօտօտիպ երկու գոյնով—հայկական կեանքից։

«Սափրիչ»-ի խմբագրութեան գլուխ անցած են գործին տեղեակ մասնագէտ անձեր և բարձրագոյն դպրոցի ուսանողներ։

«Սափրիչ»-ի բաժանորդագինն է տարեկան 2 րուբլի ճանապարհածախսով ու պրէմիաով. առանձին համարները 15 կ.։

Խմբագրութեան ժամանակաւոր հասցէ։—С.-Петербургъ Казанская 46. Д. Окрояпцу.

2—2

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.